



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



U6ptp

325, 326, 327  
328, 329, 330, 331










55



Ա Ս Ե Վ Ա Դ Ր Ա Յ Ա

ՄԱՆԿԱՆՑ



Ձ Ի

Յ Ե Լ Ի Զ Ե

Dr. W. G. B. & H. W. D. 1888

27

22 JUL 1987

ԱՐԴՅՈՒՆ

330

ԹԵՂԻ ԶԵՂ

ԿԱՐՈՅԱՆ

ԱՐԲ ՏՎԱՅ Յ



Օ Հ Յ Ա  
IN

ՎԵՐԵՍԻԿ

ՍՈՒՐԵ ԴԱԶԱՐ

—

1855

ԵՐԵՎԱՆ

Հ Օ Գ Ա Տ Ե Վ

55088-ՆՎ

Օ Ա Բ Հ Ա Կ Ա Խ



330-2003 9/ 4270  
41)

18329





14.

ԳԵԼԻՉԵ

# ՈՐԲ ՏՂԱՅ

ԳԼՈՒԽ Ա.

ՄՐՐԻԿ :

Լ ՈՐԵՆԱՅԻ պղտի գեղի մը մէջ հա-  
րուստ վարձուոր մը կը բնակէր , որ իր  
մարդասիրութեանը համար ամենուն սի-  
րելի եղած էր . աս մարդս՝ այնպէս ա-  
ղէկ գիտէր գործածել իր հարատութիւ-  
նը , որ ամեննեին մէկու մը նախանձը չէր  
շարժէր . վասն զի թէ որ անյաջող հունձք  
մը սղատահելու ըլլար , կամ թէ կարկուտը  
և կամ մըրիկը մերձակայ դաշտերը ապա-  
կանելու ըլլար՝ ան ատեն այս ամեն դժբաղ-  
դութեանց հանդիպողները իրեն օգնու-  
թեանը կը դիմէին , որոնց համար բաց էր  
իր քսակը . խել մը ընտիր զաւակներ ունէր

որոնք իրեն ծերութեանը ակնկալութիւն-  
ներն էին : Այսպէս երբոր բան մը չէր  
պակսէր այս պարկեշտ մշակին երջանկու-  
թեանը , ահա սարսափելի հարուած մը  
ինջաւ գեղին վրայ ու անոր խաղաղասէր  
բնակիչները զարհութեցուց և աւերակներու  
մէջ ձգեց :

Յուլիսի կիրակի օր մը գեղին բնակիչնե-  
րը ժողուած էին խիտ անտառի մը շուքին  
տակը , և հովուական քաղցրանուագ տի-  
կին և սրբնութին ձայները կը թնդացնէին  
այն հովանաւոր ծառատունկը . երբոր աս  
կերպով կը զուարձանային մէյմնալ յան-  
կարծ լեռան պէս ու սպառնալից ամպեր  
սկսան դիպուիլ գլուխներնուն վրայ , օդը  
այնչափ խաղաղ էր որ և ոչ տերեները կը  
շարժէին , բայց փայլակներուն սաստկու-  
թենէն սոսկալի փոթորիկ մը կը գուշա-  
կուէր . և ան միջոցին ընկած անձրեւին  
հեղեղները քաշեցին տարին ամէն բան  
ինչ որ դիմացնին ելաւ : Խեղճ գեղացինե-  
րը յուսահատ սկսան իրենց ասլահով տե-  
ղեր փնտուել չորս գինին պատած ծառե-  
րուն տակը , բայց հեղեղը զամէնքն ալ  
ընկղմեց իրենց ընտրած ապաստանայան-

ներուն մէջ : Երկինքը կը ակի սլէս կը վաս  
ոէր , երկիքը կը հեծէր և որոտման սլէս  
խորունկ և երկարատե շառաչիւն մը կը  
լսուէր . գիտուած ջրերու կոյտ մը , որուն  
մէկ ծայրը ինչուան երկինք կը համնէր և  
խարիսխը գետին կը դաշէր , կատաղի  
մրրկէ մը մղուելով քաշեց տարաւ ինչ որ  
զտաւ թէ հիւղ , թէ ծառ , և թէ խաշնիք ,  
ու բան մը չկրցաւ գէմ՝ գնել անոր բռնու-  
թեանը . նախիլներու բառաշը մեռնող մարդ-  
կանց ձայնին հետ կը խառնուէր : Հեղեղը  
տարաւ դիակները գէպ 'ի ԱՌովելլա , որ  
ծովացեալ բոլոր բարեբեր դաշտերը և կա-  
նանչ բռուբները ծածկեց :

Բարի վարձուորին բնակութիւնը քիչ մը  
ատեն գէմ՝ դրաւ քամիներուն բռնութեա-  
նը , ուր տարաբաղդ ընտանիքը ապաւինած  
էր տանը վերին յարկը . խեղճ հայրը առաւ  
ձեռքը իր որդիքը , և գէպ 'ի երկինք վեր-  
ցընելով ինդրեց Աստուծմէ որ իբրև փո-  
խարէն իր բարերարութեանցը գոնէ այս  
անմեղ որդիքը փրկուին : Հասաւ ամենա-  
կալին զահը անոր աղանչանքը և իր խըն-  
դրուածքը ըստ մասին կատարուեցաւ :  
Զըեղէն սիւնը մոնչալով որոտալով առաջ

կուզար . Հասաւ տանը՝ զարկաւ խորտակեց , ու կտօրները ցիր ու ցան եղան ջրին երեսը : Այս ձախորդովմեան մէջ ամենքն ալ խղդուեցան բաց ’ի փոքրագոյն տղեն որ թեթև տախտակով մը ջրերուն վրայ խալսեցաւ աստուածային խնամքով որ միայն աս տղան ուզեց փրկել :

Այս ջրի հեղեղներուն մէջ փափուկ մանկիկը ազատարար տախտակին վրայ ձեռուըները երկինքը վերցուցած՝ խել մը ատեն թափառեցաւ ջրերուն վրայ . ուրիշ առաջնորդ մը շունէր , բայց եթէ այն երկնային աջը որ զինքը կը պաշտանէր . որն որ հասուց վինքը ան վտանգաւոր գիշերէն ետքը գեղի մը եկեղեցւոյ աստիճաններուն առջե , ուր նոյնալէս բարձրացած էին ջրերը :

Այս սրտաշարժ տեսարաննէն խել մը բաղմութիւն գեղացիներու դիզուեցան ջրերուն եղեղքը , և աչքերնին տնկած բերանաբաց կը նայէին , տեսնելով աս տղուն գեղեցկութիւնը և ուկեթել մազերը որ կը ծածանէին քառիմէն , կարծես թէ նոր Առովսէս մը իրենց աչքին կը տեսնուէր ասանկ ջրերուն վրայէն Աստուծոյ տանը դրան առջեր հասած :

Տարին զինքը ժողովրդապետին տունը ,  
և բոլոր գեղին բնակիչքը ուզեցին մասնաւ  
կից ըլալ իրեն խնամքին համար եղած  
ծախքերուն : Հարի ժողովրդապետը պա-  
տուական ձեռքը դրաւ աս ապերջանիկ  
լքեալ տղուն վրայ . ու հոն ժողովուած բա-  
րեսաշտ անձանց կողմանէ ընդունեցաւ այս  
երինային ընծան : Ճամփորդ պատկերա-  
հան մը աս գեղացոց մէջը գտնուելով ինք-  
նայօժար յանձն առաւ աս դիալուածս նկա-  
րելու ան տախտակին վրայ որով որ խալը-  
սեր էր :

Ժողովրդապետը աս տղուն քանի մը  
հարցմունքներ ըրաւ , և խեղչին շփոթ-  
պատասխաններէն աս միայն իմացաւ որ  
չորս տարեկան է եղեր ու անունը Փելիչէ :  
Աս աւագերէցին տունը խել մը օր լեցուն  
էր հետաքրքիր մարդիկներով որոնք կու-  
գային տեսնելու տղուն գեղեցիկութիւնը .  
ժողովրդապետը գեղեցիկ մեկնութիւնն մը  
տուաւ անոր անուանու որ բարեբաղդ կը  
նշանակէր , որով եւեցաւ ժողովրդեան  
հետաքրքրութիւնը ու զարմանքը : Հողոր  
գաւառը ծանուցումներ խաւրուեցաւ իմացը-  
նելու իր ընտանեացը թէ Աստուծոյ խնամ-

քը ուր բերաւ իրենց տղան . բայց զինքը  
մինտուող մարդ մը չերևնալով, հաստատու  
թեամբ միտքը դրաւ ժողովրդապետը՝ թէ  
միայն աս տղան ազաւեցած ըլլայ ան գե-  
ղին դժբաղդութենէն որ Յ լեւքա հեռու  
էր իր բնակութենէն , և թէ ջուրը կոխած  
էր բոլոր գեղը . ամենուն գութը երթա-  
լով կաձէր տեսնալով աս տղուն անտէր և  
որբ ըլլալը . ժողովրդապետը որոշեց Աս-  
տուծոյ սեղանին ծառայութեանը նուիրել  
աս տղան :

**Պատկերահանին նկարը քիչ ատենէն**  
լմնցաւ , որուն մէջ տղուն ճիշդ նմանու-  
թիւնը ու անոր փափուկ թեւերուն դէալ 'ի  
երկինք տարածած գլութիւն խնդրելը , ա-  
նանկ գեղեցիկ դրուած էին՝ որ սղակսու-  
թիւն մը չունէր . ժողովրդապետը իր ժո-  
ղովրդեան առջին ինկած պատկերահանին  
աս ընծան տարաւ դրաւ սուրբ Աստուա-  
ծածնայ մատրան մէջ : **Փելիչէն կտաւէ**  
զգեստ մը հագած իր արժանաւոր հո-  
փուին ետևէն կերթար . իրեն ներկայու-  
թիւնը կաձեցնէր ամենուն գութը , անոր  
ազատութեան աս անակնկալ դիպուածը  
ամենուն միտքը ձգելով :

## ԳԼՈՒԽ Բ .

Յարաշի բաժանումն :

ՏԱՍԸ տարի ամբողջ ՖԵԼԻԾԵՆ լաւ կեր  
պով փոխարինեց ժողովրդապետին իրեն  
կրթութեանը համար ըրած ջանքին . իր  
պատանեկութիւնը ուրիշ հասակալիցնե-  
րուն կենացը ամեննեին չէր նմանէր , վասն  
զի կը փախչէր միշտ խաղէ ու անօգուտ  
զրոսանքներէ , որով և ժողովրդապետին  
խնամքը բնաւ պարապը չգացին . կը ցուցը-  
նէր իր երախտազիտութիւնը եռանդեամբն  
և հպատակութեամբը իր արժանաւոր բա-  
րերարին : Կղերիկոսական զգեստը զոր կը  
հագնէր եկեղեցնայ մէջ ամէն կրօնական  
հանդէսներու ատեն՝ եւելի շնորհք մը կու-  
տար իր զեղեցկութեանը , որ կարծես թէ  
տարի տարուան վրայ կը շատնար . այնչափ  
բարեպաշտ էր որ ամէն ընտանեաց հայրե-  
րը զինքը իրենց որդւոց օրինակ կուտային ,  
ու զեղին բոլոր բնակչացը շափէն եւել սի-

բելի էր . ամէն անգամ՝ որ զինքը տեսնային մտքերնին կիյնար իր զարմանալի կերպով աղատումը , և փառք կուտային Աստուծոյ որ զիրենք ընտրեց ասանկ հրաշալի տղումը խնամակալ ըլլալ . ուստի ասով կը յորդորուէին պղտի ընծաներ տալով օդնելու ժողովրդապետին անոր համար ըրած ծախքերուն :

Այս կերպով մեծյաւ այս առանձնաշնորհ պատանին , որուն վրայ տարածած էր Աստուած իրեն խնամքը և աւելի բարձրագոյն վիճակի մը սահմանած էր զինքը՝ որուն արժանի պիտի ըլլար ցաւալի փորձերէ անցնելով :

Եկաւ հասաւ աւագ շարաթուան աղօթքի և պահոց օրերը , որ գեղին մէջ մեծ պատկառանքով կը պահուէր : Աւագ Ուրբաթ օրը բոլոր գեղին բնակիչները եկեղեցին ժողվուած մտիկ կը նէին իրենց ժողովրդապետին տուած չարչարանաց քարոզը . երբոր հասաւ այն վսեմական վայրկեանը , որ մարդացեալ Աստուած մը խաչին վրայ իր սուրբ հոգին կաւանդէր մարդկային ազգը գերովմենէ խալսելու համար . ան միջոցին որ կը նկարագրէր այս նուի-

բական զոհին յետին ցաւերը , ձայնը սկսաւ  
մարիլ , երեսին գոյնը նետեց , և ինկաւ ճըշ-  
մարտութեան ամնդիննէն մահուան գիրկը :  
Չաւալի տեսարան մըն էր Վէլիչէին աղա-  
ղակը և անոր փոյթը բոլոր ուժովը վեր-  
ցընելու ան պաղած անկենդան մարմինը ,  
միանդամայն եկեղեցին լեցուած բաղմու-  
թեան սարսափը : Ամէն ջանք 'ի գործ գրին  
առ սուրբ հովիւը նորէն իր բաղմաթիւ որ-  
դւոցը դարձնելու . բայց աստուածային նա-  
խախնամութիւնը ուզեց որ ինքը մեռնի նոյն  
օրը և նոյն վայրկենին , յորում՝ մեռած էր  
իր Աստուածային վարդապետը , որպէս զի-  
երթայ վայելէ անոր քովը առաքինի հողի-  
ներուն համար պատրաստած հատուցումը :

Այս մահը պաղեցուց ցաւով ամենուն  
սիրտը , իսկ Վէլիչէին յուսահատութեանը  
չափ չկար . կը մտածէր ու կը յիշէր տիսուր  
լութեամբ մը իր բարերարին ան իմաս-  
տուն խրատները և աղդու օրինակները ո-  
րոնցմով իր սրտին մէջ առաքինութեան  
բողսոջները ծլեր էին . ուժ կուտար ինքն  
իրեն ուրախութեամբ համբերելու այս ան-  
դարմանելի կորուստին , և միայն Ճակտին  
դեղնութենէն կրնար գուշակուիլ իր կրածը .

իմացուց ամենուն որ կուզէր իր հօրը մարմնոյն քովը սպասել, ու ինչուան որ զինքը գերեղման չի դնեն քովէն պիտի չհեռանայ : Ենօգուտ տեղը աշխատեցան փոխելու իր միտքը դրածը, որութետև և ոչ պատասխան կուտար ան մարդկանց որոնք կը յորդորէին զինքը թողուլ այն տիսուր տեսարանը :

Ֆէլիչէն բոլոր կիշերը աղօթքալ անցոց մահուան անկողնոյն քովը . և երկրորդ օրը իր յարգոյ պաշտապանին յուղարկաւոր գնաց բոլոր գեղին բնակչացը հետ : Բայց ան վայրկենին որ հողով կը ծածկէին ան ապականացու նշխարքները՝ վկան ան աստիճան այլայլութիւն մը եկաւ որ չկը նալով սանձել վազեց ու եկաւ միսիթարութիւն գտնալու Եստուծոյ սեղաններուն առջեր : Հոն ինկաւ ան պատկերքին դիմացը որ միտքը կը ձգէր իրեն զրկուիլս 'ի ծնողաց և ան ամէն բարիքը որ աս արժանաւոր հովուէն ընդուներ էր . և կը իննդրէր Եստուծմէ ոյժ որ կարենայ համբերել այս ցաւադին բաժաննմանը : Իրեն աղօթքը քիչ մը հանդարտեցուց որտին այլայլութիւնը և ուժ տուաւ, դադրեցուց արյունքը . սիր

տը խաղաղացաւ , ու նոյն ատենէն սկսաւ  
հիանալի օրինակ մը տալ աստուածացին  
կամաց ամենավխեմ համակերպութեան :

Գեղին առանց ժողովրդապետի մնա-  
լը՝ մէկէն ծանուցուեցաւ Ա,անսի Ապիս-  
կոսպոտին , որ փութաց ուրիշ նոր հովիւ-  
մը խաւրելու . արդէն լած ըլլալով եպիս-  
կոսպոտը Փելիչէին զարմանալի կերպով ա-  
ղատիլը , նաև իմանալով որ այս պատա-  
նիս մեծամեծ ապագայ բարեաց յոյսեր կո-  
տայ՝ հրամանեց որ Ա,անսիի կղերիկոսարանը  
դայ ու հոն առաջ տանի իր հոգեորական  
ուսմռնքները :

Այս անկարծելի լուրը բոլոր գեղին բնա-  
կիչները անպատճելի ցաւով լեցուց . բայց  
Փելիչէ ջանաց զիրենք հանդարտեցնել քա-  
նի մը բան խօսելով իրենց լի զգացմամբ ու  
տրամաբանութեամբ , որուն մէջը խնացուց  
թէ ինքը պարտական է հնազանդելու իրեն-  
դիսաւորներուն . և ըսաւ . — Ի՞նդունեցէք  
ով բարի բնակիչներ իմ շնորհակալութիւն-  
ներս ձեր այն պաշտպանութեանը համար  
որ ըրիք ինծի պէս մէկ լքեալ ու ողորմելի  
տղու մը . ես ամեննեխն չեմ կրնար մոռնալ  
թէ ինչպէս Աստուած ձեր ձեռքին մէջ

դրաւ զիս, և թէ դուք զիս իբրև ձեր որ-  
դոսյմէ մէկը այնպէս ընդունեցաք : Ես  
կը ջանամ իմ բարի վարքուխ ձեր ինծի ցը-  
ցուցած սիրոյն արժանի ըլլալ . և որովհե-  
տեւ գեւ պատանի եմ, կուզեմ անանիկ ե-  
ռանդեամբ աշխատիլ, որ նորէն շուտով  
դառնամ հոս, և ցուցնեմ օրինակով որ  
ձեր ըրած բարիքը պարապ չեմ հանած և  
անով փոխարինեմ ձեզի որչափ կրնամնէ :

Աս վերջի հրաժարական բարեխն՝ ամէն-  
քը առատ արցունք թափեցին, որով լաւ  
ցցուցին Փելիչէխն վրայ ունեցած իրենց  
սէրը : Աս բարի մարդիկը Փելիչէխն պր-  
լուած չէին կրնար բաժնուիլ : Վերջապէս  
այլայլած սրտով մը ղատուեցաւ իրենցմէ  
Փելիչէն, և մտաւ ան երիցատունը, ուր  
անցուցած էր ամենայն երջանկութեամբ իր  
աղայութիւնը . հոն ինկաւ խաչելութեան  
առջեր, որն որ կը զարդարէր իր բարերա-  
րին ամայի խույը, աղօթեց անոր հոգւոյն  
որուն յիշատակը իր մտքին մէջ միայն կեն-  
դանի էր, առաւ ձեռքը իրեն ունեցած բա-  
ներուն կապոցը, ու ելաւ այն խաղաղ ու  
երջանիկ բնակարանէն :

Գեղին բնակիչները չորս կողմը ժող-

փուած կը ցուցնէին թէ ինչ ճամբով սիտի  
երթար , կը բայատրէին գժուարին ճամ-  
բաները , և թէ ինչ կերպով կրնար կար-  
ճեցընել իր ճամբան : Պաշարով լեցուն  
սպարի մը , որուն մէջ կաշիէ քսակով մը  
աղքատ գեղացոց ընծայները դրած էր՝  
տղօւն ուսը բեսնաւորեցին : Բայց ան մի-  
ջոցին որ ինքը կրսկսէր հեռանալ , մէկ գե-  
ղացի սպատանի մը ձեռքը առած իր սպար-  
կը իմացուց ամենուն որ կուզէ ճանապար-  
հակից ըլլալ Գիշէլիչէին . ցնծովթեան աղա-  
ղակով ամէնքն ալ ընդունեցան սպատա-  
նոյն աս առաջարկովթիւնը : Խոկ Գիշէ-  
լիչն փուծ տեղը կաշխատէր դէմ դնելու  
աս բանիս . բայց սպատանին ապահովցոց  
զինքը թէ իրեն համար զուարճալի ճեմե-  
մբ մըն էր ատ 20 փարսախի ընելու  
ճամբան . վասն զի ինքը սիտի հսկէր  
երկնային սպատանոյն վրայ , (աս անու-  
նով Գիշէլիչն կ'իմանային ամէնքը) : Ե-  
լաւ գեղէն ինչակէս որ մտած էր հոն .  
իր ընկերակիցը կը ջանար իր զուարճու-  
թեամբը փոխել Գիշէլիչն տիտր մտած-  
մունքները որոնք երեսին գոյնը նթեմացու-  
ցեր էին :

— Աիրտ առ կըսէր , սիրտ առ և ուրախ կեցիր :

— Ի՞նչպէս ուրախանամ՝ պատասխան տուաւ , երբ որ իմ հայրա կորսնցուցի :

— Եստուած՝ զինքը իր քովը կանչեց , դու ի՞նչ յանցանք ունիս :

— Ես ալ բաղդաւոր կը լսայի , թէ որ զիս ալ անոր հետ միացներ :

— Քու հասակիդ կը յարմարի մահը մտածել :

— Ինքը ամէն վայրկեան կը հասնի :

— Ետածէ մանաւանդ որ կերթաս բնակելու մեծ քաղաք մը , և թէ եպիսկոպոս մը քու մտքիդ ճարտարութեանը վրայ աղէկ գովիստներ լըսած է , և դուն չես հասկընար թէ ասանկ պաշտպանութեան ծայրը ուր կերթայ . երանի թէ ես քու տեղդ ըլսայի , որ ամեննեին մտմտուք մը չէի ունենար :

— Եստուծոյ իմ վրաս ունեցած խոր հուրդները ես չեմ գիտեր . բայց թէ որ իմ կամքիս տէր ըլսայի , կ'ընտրէի մանաւանդ մնալ ան գեղն ուր որ ինձի այնչափ սիրոյ նշաններ ցցուցին :

— Ետ ի՞նչ տեսակ մտածութեան կերպ

է , կուզես բոլոր կեանքդ անցնել զեղի մը  
մէջ , ուր որ շորս կողմէ գեղացիները պա-  
տաճ՝ չեն կը մաքար քու բաղդդ ազնուացնել .  
և ընդ հակառակն՝ քաղքին մէջ քու զի-  
տութեամբդ կը մաս աւելի բարձր աստիճա-  
նի մը համփիլ :

— Ես բաղդի չեմ նախանձիր :

— Ուրիմն ի՞նչ բանի կը փափաքիս :

— Հոգւոյ խաղաղութեան , և իմ  
նմանեացս օգնելու փառքին :

— Մեր ողորմած հոգի ժողովրդապե-  
տին պէս կը խօսիս դուն . զարմանալու  
բան , աղէկ կը տեսնուի որ ինքը զքեզ կը ք-  
թիր ու մնուցեր է . բայց լաւ նայէ որ չծաղ-  
րեն զքեզ քաղքին պատանիները , որոնք  
լուսաւորեալ են :

— Ես կարհամարհեմ իրենց ծաղը :

— Դուն բան մը չես զիտեր . ես թէ որ  
միշտ մեր զեղին մէջ մնացած ըլլայի , քեզի  
պէս միամիտ կը լլայի . բայց շատ անգամ  
պղտի Ճամբորդութիւններ ընելով քաղաքը ,  
աչքերս բացուեցան . տարակոյս չիկայ որ  
դուն ալ նոյնպէս պիտի ըլլաս . թէ որ փա-  
ռասէր չես քեզի համար , գոնէ քիչ մը ինձի  
համար եղիր . նայէ Փէլիչէ , ես պարզ կը

խօսիմ՝ թող կարծեն զեզացիները որ ես  
բարեմտութեամբ քեզի ընկեր եղայ, բայց  
շիտակը կ'ըսեմ քեզի՝ որ ասանկ դիտմունք  
մ'ալ ունիմ թէ դու կրնաս ինձի օգտա-  
կար ըլլալ աս կերպով. դու հիմա կը միտ-  
նաս անանկ գալրոց մը ուր կան հարուստ  
անձինք. թէ որ իրենց ըսելու ըլլաս թէ  
ես քու բարեկամի եմ, և սիրաս հետդ  
կաստուելուն համար քեզի ընկեր եղեր եմ,  
անշուշտ կրնամ ես ինձի տեղ մը գտնալ:

— Բայց ի՞նչպէս տեղ կուզես դուն :

— Ի՞նչ զարմանալի բան կը հարցնես.  
ի՞նչ տեղ կուզէ ըլլայ, բաւական է որ ես  
զեղ չդառնամ նորեն՝ որն որ կատեմ, բո-  
լոր սրտովս :

— Ի՞նչ կըսես թեռնարդոս, դուն  
կուզես թողուլ ծնողքդ :

— Իրենք ինձի հարկաւորութիւն չու-  
նին :

— Թաէ որ Աստուած իմ ծնողքս ողջ  
ոլահած ըլլար, ես զիրենք չէի թողուր ա-  
մենելին :

— Ես քեզի պէս ոչ գիտուն եմ և ոչ  
ալ իմաստուն, կուզեմ զուարձանալ, տեղ  
փոխել քաղաքներ տեսնալ. և որովհետե-

չեմ՝ կրնար ապրիլ առանց բան մը լնելու ,  
անոր համար կուվեմ աղէկ տէր մը դտնալ  
որ լաւ վճարէ ինծի , որպէս զի քաղքին  
մէջը նշանազգեստով իր ետևէն երթամ :

— Ի՞նչ , դու կուզես ծառայ ըլլալ :

— Եմնէն երջանիկ վիճակն է . բարեւ  
կամ մը ունիմ որ երկու տարիի մօտ է  
քաղքին աղնուականներէն մէկուն քով ծա-  
ռայութեան մնած է . անանկ աղէկ վիճակի  
մէջ է , որ եթէ զինքը տեսնաս , չես հաւ-  
տար թէ գեղացի ծնած ըլլայ , ու կարծես  
թէ փառաւոր պարոն մըն է . ինքը իր բա-  
րեկամները ամենեին շնանշնար , և անանկ  
քիթը մենծ , անանկ հպարտ մըն է , որ . . .

— Ի՞նչ բանի համար ատանկ հպարտ  
է , արդեօք իրեն նուաստութեանը հա-  
մար : Ինքը թէ որ խելք ունենար շէր փո-  
խեր երկրագործութեան աղնիւ արուեստը՝  
ծառայութեան հետ :

— Ինքը առաւօտընէ ինչուան իրիկուն  
ուրիշ բան չըներ , բայց եթէ զեղեցիկ զգես-  
տով ժուռ գալ . կը քնանայ աղուոր ան-  
կողնոյ մը մէջ , լաւ կը տաքնայ , ու կուտէ-  
աղէկ . կընա՞յ մի բաղդատովիլ աս վիճակս  
ան մեր զեղի մարդկանց կենացը հետ , ուր

ալէտք է բոլոր օրը աշխատիլ, և ետքը  
վարձքի տեղ սև հաց եզիապտայորեան ու-  
տել:

— Ինծի համար այն սև հացը առելի  
սպատուով վաստրկուած է, քան քու ընկե-  
րոջդ Ճերմակի հացը. բայց տարբերութիւնը  
իմանալու համար պէտք է աշխատանք սի-  
րել, ծոյլ մարդիկ չեն կրնար հասկնալ աս-  
բանս :

— Շշմարիտ է, կը խոստովանիմ որ ես  
քիչնական մը ծոյլ եմ:

— Փորձի կարօտ չէ. քու ընտրութիւնդ  
աղեկ կը ցուցնէ. բայց լաւ նայէ որ չի-  
զգաս :

— Ո՞չ, ասպահով կեցիր՝ վախ չիկայ,  
ինչ որ կուզես ըսէ, ես իմ ընելիքս որոշած  
եմ. ես հիմա քեզմէ խորհուրդ չեմ հար-  
ցըներ, բայց միայն կ'ուզեմ որ ինծի օգնես :

Ֆէլիչէն շատ ջանաց ուրիշ շատ խե-  
լացի պատճառներով իր ուղեկիցը հա-  
մովելու որ միտքը դրածէն ետ կենայ :  
Բայց Բեռնարդոս իր կողմանէ կը ջանար  
հաստատել, որ ինքը նշանազգեստ հագնե-  
լու համար ծնած է :

•Բանի որ այս երկու Ճամբորդները իրենց

տեղը կը մօտենային , Գիշեցէին զարմանքը  
երթալով կը շատնար , և առանց լաւ մը  
գիտելու չորս կողմը պատած հրաշալի տե-  
սարանը չէր կընար առաջ երթալու . ո-  
րովչետև աս առաջին անգամն էր որ գեղին  
սահմաններէն դուրս կելար . աս պատճա-  
ռաւ ինչ որ տեսնար՝ իրեն համար զարմա-  
նալի էր . ու ինք իրմէ դուրս ելած կը դո-  
չէր .

— Ո՞րչափ հրաշալի է տիեզերքս , ինչ-  
պէս աստղերուն ընթացքը՝ եղանակաց ան-  
ընդհատ իրարու յաջորդելու կը ցուցընեն  
Աստուծոյ կարողութիւնն ու մեծութիւնը :

— Ի՞նչ բանի հարկաւոր է մեզի այս  
ամէնք , ըստ Բեռնարդոս . մենք զուար-  
ժանանք , խնտանք , երգենք , որչափ որ  
կընանք , մնացածը թողԱստուած ինչպէս  
որ կուզե՞նէ ընէ :

— Օ գուշացիր , Բեռնարդոս , այս ան-  
տարբերութիւնդ զքեզ օր մը ամբարիշտ  
չնեկ . կրօնքին հրամանները կատարելով  
հաւատքը հաստատուն կը սպահուի և  
ընութեան տեսարանները կաձեցընեն զա-  
նիկայ :

— Ի՞նչ օգուտ ունին ինծի գիտնալս թէ-

ինչ կ'ըլլայ երկինքը . Ես քրիստոնէի մը  
պէս կ'ընեմ իմ աղօթքս , վասն զի աս է  
իմ պարտքս , ետք ալ ուրիշ բան չեմ  
մտածեր . . .

— Ի՞նչ , միթէ Աստուած չէք դոր-  
ծողութեանցդ նպատակը :

— Ե՛հ , միթէ ինձի պէս ինլոտի մը  
վրայ հոգ ու մտածութիւն պիտի ունենայ  
Աստուած :

— Դուն մեր ժողովրդապետին ամե-  
նաբարի խրատներէն ամեննեին օգուտ մը  
չես քաղած :

— Ուէ որ ինքը արքայութիւնն է , թող  
ինձի համար աղօթք ընէ . վասն զի ես քա-  
ղաքը ուրիշ բանի համար չեմ երթար , բայց  
եթէ հոն ձգելու աս ամէն կեղծաւորու-  
թիւնները :

— Կը ծանուցանեմ քեզի Բեռնարդոս ,  
որ քու այս կերպով մտածելու քեզի շատ  
մեասակար պիտի ըլլայ :

— Կարելի բանն է որ դոն այս հասա-  
կիդ մէջ ասանկ ջերմեռանդ ըլլաս , չես  
ուզեր քիչ մը զուարձանալ :

— Իմ զուարձութիւնս իմ պարտքերս  
կատարեն է :

— Երաւանէ շատ իրաւունք ունին եւ<sup>լիր</sup> որ զեղին մէջ քու անունդ երկնային սկառանի գրեր էին . բայց թէ որ Աստուած զքեղ իր պաշտպանութեան տակը առեր է , իմ վրաս ամեննեին խնամք չէ ունեցած , ասոր համար ես ալ փոյթ չեմ՝ ըներ :

— Կրնան արդեօք այնչափ ասկերախտ ըլլալ ստեղծողիդ դէմ :

— Ի՞նչ կուզես որ ես ըսեմ անսանկ Առ տուծոյ վրայ որ չեմ ճանչնար :

— Լաւ գիտես դու բնութեան զարմանալիքը . աս արևը որ աշխարհքս կը ջերմացնէ , կը լուսաւորէ ու կենդանութիւնն կուտայ , այս դաշտերը որ երկրիս բարիքներովը լեցուն են , ահա ասոնք՝ տիեզերիս հրամայողին բարիքներն են :

Այս խօսակցութեան ատենը Փէլիչէն տեսաւ Կանսի քաղաքը որ զուարձալի ու կանաչապարդ դաշտի մը մէջ շնուած էր . իր կեցած բարձր տեղէն բոլոր քաղաքը լաւ մը կերևնար : Արեւուն Ճառագայթները զանդակատուններուն ծայրերը զարնելով կը ցոլացնէին , ու տներուն և մեծագործ շէնքերուն պայծառ գեղեցկութիւնը դուրս կը ցատկեցընէին . Փէլիչէն հրացմամբ և սաս-

տիկ զգացմունքով կեցած կը նայէր . Երկար  
ատեն ասանկ զարմանքով դիտելէն վերջը ,  
մեծ դժուարութեամբ հաղիւ աչքերը ան  
տեսարանին դարձուց : Իր զարմանքը ե-  
ւեցաւ , երբ մտաւ ան սուրբ միայնարանը՝  
ուր կանչուած էր եպիսկոպոսէն : Իմա-  
ցաւ , աս ընտրութենէն իր վրայ դրուած  
պարտաւորութեանց ծանրութիւնը . և լու-  
մը հասկրնալով իրեն պատրաստուած պաշ-  
տօնին մեծութիւնը , խոստացաւ Աստուծոյ  
արժանաւոր ըլլալ աս պատուոյն :



## ԳԼՈՒԽ գ .

Չար ընկերներ :

ՎԱՆՅԻՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԵՏԻՆ ՔՊՄ առ  
որ ուղղուած էր ՓԵԼԽԵՆ . աս պատուական  
անձը մեծ մարդասիրութեամք ընդունեցաւ  
զիրենք և ըստ որ ինչուան վարժարան  
մտնալու ատենը , կը բարեւ կենալ  
իրեւ իրենց յատուկ բնակարանը : Ինու-  
նարդոս այս բանիս շատ գոհ եղաւ , որով  
չետեւ ասով չէր բաժնուեր ՓԵԼԽԵՆ .  
ու իր փառասիրական երավներուն մէջ  
ինքզինքը վերատեսչի մը սենեկապետ ե-  
ղած տեսնելով կ'ուրախանար : ԺՈՂՈ-  
ՎՐԴԱՎԵՏԸ ՓԵԼԽԵՆ Հարցմունքներ ը-  
րաւ , իրեն ուսմանցը վրայօք , և զարմա-  
ցած մնաց , իրոր տեսաւ այս պատանւոյն  
տեղեկութիւնները և կանխահաս գիտու-  
թիւնը :

Քանի մը օրէն վերջը ներկայացուց զին-

քը վարժարանին գլխաւորներուն , մատնաւոր կերպով յանձնելով անոնց խնամոցը . Փէլիչէն շնորհակալ ըլլալով ան բարի քահանային , իրեն ընկերը յանձնեց իր խնամոցը . խոստացաւ ժողովրդապետը և զնաց համոզմամբ թէ օր մը աս տղան կը օգտակար մարդ մը պիտի ըլլայ :

Շեռնարդոս կեղծաւորութեամբ քանի մը կաթիլ արցունք թափելին վերջը բաժնուեցաւ Փէլիչէն , և դարձաւ նորեն ան հիւրանոցը , ուր պիտի կենար ինչուան որ ծառայութեան տեղ մը գտնար իրեն : Ժողովրդապետը հարցուց իրեն ու ըստ :

— Ես քովս կը պահեմ զքեզ կը թելու համար , և թէ որ քեզմէ գոհ ըլլամ , կը ռնայ ըլլալ որ իմ ծառայութեանս առնեմ . բայց առաջուց կը սեմ քեզի որ կարդաւորեալ կեանք մը կը պահանջեմ քեզմէ :

Շեռնարդոս որովհետեւ կենալու տեղ մը դեռ չունէր , անոր համար խոստացաւ ժողովրդապետին ամէն խօսքը կատարել , միտքը դնելով որ խաբէ զան ու ինքը նոյնպէս իր ուրախ կեանքը առաջ տանի , որով կը յուսար գտնալ իր երջանկութիւնը : Ժողովրդապետին տունը կար Կոթչոն անու-

նով պառաւ աղախին մը , և մէկ երիտասարդ ծառայ մը , որ միանգամայն թէ տանը և թէ եկեղեցւոյ ծառայութիւնը կընէր . աս տղան զգաստ , պարիեշտ ու ամենայն կերպով ջերմեռանդ էր . ու աղքատաց դպրոցի մը մէջ կրթուած էր ժողովրդապետին հսկողութեանը տակ : Բնոնարդոս քիչ մը ատեն ինքզինքը պարտրկեց որ գեշ համար մունք մը չունենան վրան իր սկզբունքներուն համար . բայց կամաց կամաց յայտնեց իր ինչ ըլլալը . ծաղը կընէր պառաւին խրդամտանքը և խեղճ Անեբաստիանուին բարեսըրտութիւնը : Կոթհոն սպառնացաւ որ իրեն տիրոջը կիմացնէ աս բաններս . բայց ինքը բանի տեղ չէր սեպէր , ու նոյնպէս իրեն խօսքերովը ու վարժունքովը կը գայթակղեցնէր անխեղճը : Առաւօտուրնէ ինչուան իրիկուն կերթար ասդիս անդին կը պտրտէր՝ առանց կատարելու իրեն սլարտքերը , և իրիկունները տուն կը դառնար ուշ ատեն : Վեց ամիս անցաւ որ ամեննեին վարքը չփոխեց . օր մը Անեբաստիանուն ալ իրեն հետ զրւարձութեան տարեր էր ուրիշ չար ընկերներով . ասոնք տուն դարձան ուշ ատեն զրեթէ զինովցած և այնպիսի անկարգ կեր-

պով մը՝ որ խեղճ սպառաւին ոսկորները  
դող ելան, և փութացաւ ժողովրդասկետին  
խմայնելու . ժողովրդասկետը կանչեց զի՞նեռ  
նարդուր ու խիստ կերպով յանդիմանեց  
իրեն աս անարժան վարքը, և խմացուց որ  
եթէ չփոխէ իր վարքը, հարկ պիտի ըլլայ  
զի՞նքը վանտել և բաւաւ .

— Ես զիտեմ որ դու սուրբ Խորհուրդ-  
ներուն ամեննեին չես մօտենար, և թէ որ  
վարքովդ չցուցընես Աստուծոյ հետ հաշ-  
տուած ըլլալդ, կրնաս մէկ ուրիշ տեղ մը  
փնտուել . որովհետեւ իմ տանս մէջ բնա-  
կողները պէտք է որ ամենուն բարի օրի-  
նակ ըլլան :

Քեռնարդոս քիչ մը ատեն տարակու-  
սած մնաց թէ ինչ ճամբաց բոնէ . սուրբ  
Խորհուրդներուն մօտենալու մտածութիւնն  
այնպիսի խորշում մը պատճառեց իրեն, որ  
աւելի կրնարէր ժողովրդասկետին ծառայու-  
թենէն ելլալ . բայց անօթութենէ մեռնեղու  
վախը զի՞նքը ետ կը կեցնէր ատ Խորհուր-  
դէն . քանի մը տղայական սպատճառանք-  
ներ բերեղով զի՞նքը անմեղադիր ըրաւ, և  
խոստացաւ կատարելու անոր կամքը : Վա-  
զեց իր զի՞նարբութեան ընկերներուն և պատ-

մեց անոնց իր աս տագնասլը . անոնք առանց  
ամրջնալու խորհուրդ տուին որ սուտ խոս-  
տովանութիւն մը ընէ . — Ի՞նչ փոյթ է  
քեզի կ'ըսէին , ուզետ չուզես ստիպուած ես  
ատ սուտ խոստովանութիւնը ընելու որ-  
պէս վե քու տեղդ չկորմնցնես . ուրեմն  
խիոջ ընելու բան չկայ , ըսէ ինչ որ կուզես ,  
առ քու խոստովանած ըլլալուդ վկայակա-  
նըդ , և առաջ տար քու զուարձութիւններդ՝  
իրեւ թէ ամեննեին բան մը հանդիսած  
շըլար :

Բեռնարդոս գեռ այնչափ մոլի շըլալով  
չէր յանդըգնէր ատ կերպով սուրբ խոր-  
հուրդները արհամարհէլ , անոր համար կու-  
զէր փախչիլ ասանի չար գործողութեան մը  
ձեռք զարնելէն , ու շուարած կը քալէր ա-  
ռանց գիտնալու թէ ուր կերթայ : Ա եր-  
ջաղէս դիսուածով գնաց Փելիչէին վար-  
ժարանին դրան դիմացը , ներս մտաւ և  
ուզեց խօսիլ իրեն հետ :

Հս եկայ , ըսաւ , խորհուրդ մը հարցնե-  
լու քեզի : Փելիչէ , ըսէ ինծի , ինչ պէտք  
է ընեմ . իմ ժողովրդապետս կը ստիպէ զիս  
որ երթամ խոստովանիմ , և խոստովանանք  
ըլլալուս վկայագիրը տանիմ՝ իրեն :

— Պիետք է որ հնազանդիս :

— Քեզի շիտակը ըսեմ, քանի որ Կանանի եկեր եմ այնպիսի տղայութիւններ ըրեր եմ, որ կը տարակուսիմ թէ չեմ կընար ձեռք ձղել խոստովանութեանս վկայականը :

— Վարքդ փոխէ, բարի մարդ մը եղիր, քու կըօնքիս հետևէ . մէյ մըն ալ ասանկ շփոթութիւններու և մտմտուքի մէջ չես իյնար :

— Առ ըսածներդ շատ դիւրին բաներ են քիզի համար որ սուրբ մարդ մըն ես . բայց ես քեզի չեմ նմանիր՝ զինի խմել, խաղ, ուրախութիւն, և հաճոյք կը սիրեմ . այս ամէն բանսով երկինքը շվաստրկուիր, աս ալ լաւ գիտեմ, բայց գալիքներան ամեննեին հոգ չեմ ըներ :

— Դժո. կը համարձակիս ինձի ասանկ լեզու բանեցընել :

— Ե՞՛չ, կուդայ ատեն որ ես ալ խելքս դլուխս ժողվեմ, բայց երբոր ծերանամ :

— Խակ թէ որ յահկարծ մահը վրայ հասնի՝ աս քու խառնակեցութեանդ ատենը, թէ որ Աստուած քեզի ապաշխարելու ատեն շտայ, չես վախնար յաւիտե-

հական սլատիմներէն՝ որոնք քեզի համար պատրաստուած են :

— Ո՞չ, թէ որ ասկահով ըլլայի քու բած խօսքիդ վկայ, անտարակոյս ինք զինքս կը շտկէի, բայց աղէկ զբանս Փելիչէ, որ ամենքը քեզի ակս չեն մտածեր :

— Թէ որ ինձի հետ աս կերպով սիւտի խօսէիր կրնայիր և ոչ իսկ գալ քովս :

— Ի՞նչ ընեմ, ես մտածածս կը զուրցեմ. և որովհետեւ դու այնչափ լաւ մարդ ես, տարակոյս շունիմ՝ որ քու բարեկամդ մէկ մեծ զլսի ցաւէ ու շփոթութենէ խալսելը մրայէդ չես թօթվեր :

— Ի՞նչ կրնամ ընել ես քեզի :

— Ինձի խոստովանութեան մկայազիր մը ճարել :

— Ի՞նչ, դու կը յանդգնիս առաջարկելու ինձի որ սրբապրդութիւն ընեմ :

Ո՞չ, ո՞չ, ի՞նչ փուծ տեղը կը տաքնաս. դու ալ ամէն խօսք ծուռ պիտի հակիսաս, չես մտածեր որ ես իմ ծառայութեան տեղը կը կորսնցնեմ :

— Արեմն գնա հնազանդէ, և կեցիր ծառայութեանդ մէջ :

— Լաւ, որովհետեւ դուն վկա կը վոլն-

տես, ես ալ կերթամ զինուոր կը լամ, տարիքս արդէն հասած է, ու պէտք է որ կամ ուղելով և կամ բռնութեամբ զինուոր ըլլամ. ես պատերազմ կը սիրեմ, և ով գիտէ, օր մը ուրիշներուն պէս կընամ ես ալ զօրապետ ըլլալ:

— Առ արհեստը քնչի համար չէ, պատերազմը աշխատալի արհեստ մըն է, մեծ բաղդ պէտք է որ առաջ երթաս, որովհետեւ բոլոր գաղղիացիք քաջ պատերազմող են :

— Ես ալ ուրիշներուն պէս կընեմ, աշխարհքներ կը տեսնեմ կը զուարձանամ, և զէթ հօն չեն վնասոեր լաւ ըլլալու համար բարի վկայութիւն :

— Դուն շատ կը սխալիս, ամէն տեղ պէտք է աղէկ անուն ունենալ:

— Աւ ըսելիք չմնաց, վասն զի կը տեսնամ որ դու աւելի կախորժիս որ պատերազմի երթամ ես, քանի թէ ճարես ինչի ան թղթի կտորը որով քու բարեկամդքու քովդ կընար կենալ:

— Պարտքերդ կատարէ, ու ես ան ատեն զքեզ իբրև բարեկամ կը ճանինամ:

Ցէլիչէն այս խօսքերս ըսելով քաշուե-

յաւ և թողոց Բեռնարդոսը մեծ շփոթութեանն մէջ : Վ ասն զի պատերազմի երթաւու խորհուրդը ուրիշ բան չէր , բայց եթէ սոսկ սպառնալիք մը , որով կը յուսար համազել գիշեցէն և օգտուիլ : Խնքը այնչափ ծայլ էր , որ չէր կրնար զինքը պատերազմի վտանգներու մէջ դնել . երկար ատեն մտածեց , վերջապէս կարօտութենէն ստիպուել , միաքը դրաւ որ ժամ երթայ : Խոռովակ ոգւով քանի մը քայլ հազլւ թէ ըրեր էր , մէյմնալ իրեն ընկերներէն մէկը դիմացը ելալով բռնեց թեւէն և հարցուց թէ ինչ պիտի ըլլայ իրեն այս աստիճանի մտածութեան մէջ ընկըռմած երթալը : Բեռնարդոսը բառ պատճառը . ան ատեն յորդորեց բարեկամը որ իր ետևէն զայ , ու տարաւ խոթեց զինքը գինեստան մը , հոն դաւաթը ձեռքերնին սկսան կենակցիլ :

Աս միջոցներուս ամինուն խօսակցութեան նիւթ մը եղած էր Գաղղիացւոց , ըրած պատերազմը Ապանիացւոց հետ . Պիետրու՝ Բեռնարդոսի աս բարեկամը , սկսաւ գովել թէ ինչ մեծամեծ օգուտներ կը բերէ պատերազմը , ու ըստ .

— Կը զարմանամ ի՞նչու այսչափ շփու-

թած ես , երբոր պատերազմը զքեղ երջանիկ ու ազատ կրնայ ընել :

— Շիտակը ըսեմ , պատասխան տուաւ Բեռնարդոս , պատերազմէ կը վախնամ :

— Սիրտ առ բան չկայ , աս վախը ամենուն կը հանդիպի : Գնայ , գնայ , երկու ամիսէն կը տեսնաս որ շատ զոհ կ'ըլլաս աս վիճակը յանձն առնելուդ փրայ . պատերազմը մեզի պէս խեղճերուն շատ կը յարմարի , որ արդէն կորսնցընելու բան մը չունինք . թէ որ ոռումք մը սպատահելու ըլլայ , աղէկ է՝ բաներնիս շուտով կը լըմբնայ . խել ընդ հակառակն հրացանի մը շիտակ հարուածը անանկ մեծ բաղդի կը հասցնէ զմարդ , որ տասը տարուան վշտալի աշխատութեամբ չկրնար ձեռք ձգել :

— Ճշմարիտ են ըսածներդ , բայց դու ալ աղէկ գիտես Պիետրոս որ պէտք է սիրտ ունենալ :

— Քաջասրտութիւնը ատենին կուգայ : Երթանք , ինծի հետ եկուը , ես վազելով կերթամ որ իշխան սպարապետին գրօշն տակ զինուոր զրուխմ :

Պիետրոս շատ մը դիմի խմցուց Բեռնարդոսին , անանկ ոք դիմովցած ու պատէ-

պատ զարնաւելով զինետռնէն գուրս եւ<sup>ա</sup>  
լան , և մէկէն գնացին երկուքն ալ զինուոր  
զբուելու : Ժողովրդապետը Բեռնարդոսին  
զինուոր ըլլալը իմանալով , յորդորեց և  
խրատեց որ կրօնքը ձեռք առնէ թէ որ  
կուզէ որ Աստուծոյ հովանաւորութիւնը իր  
զենքերուն վրայ ըլլայ : Բեռնարդոս որ ալ  
շահ մը չունէր կեղծաւորելու , յայտնեց իր  
ամենաչար սկզբունքները այս բարի մար-  
դուն . որ սոսկաց տեսնելով աս աստիճան  
չարութիւն , ասանկ տղայական հասակի  
մէջ . բայց տարակոյս չկայ որ այսպիսի  
մարդ մը առաքինութեան ճամբան բերելու<sup>ա</sup>  
համար մեծ աշխատութիւն և փոյթ պէտք  
է . անոր համար , յանձնեց զինքը ամենա-  
կարողին ձեռքը որ աշխարհքս կը կառավա-  
րէ :

Բեռնարդոս նշանազգեստ մը հագնելու  
փափաքով խենդեցած , և իր վատութենէն  
առաջ եկած երկիւղալի մտածութիւնները  
մերժելով , վազեց Գելիշէին վերջի բարեւ  
տալու . որ սքանչելի խրասներ տուաւ , և  
սլատուիրեց իրեն բաղդի ու յաջողութեան  
առեն չափաւորութիւն ունենալ , յաղթուող-  
ներուն վրայ զմութիւն . և ձախորդու-

թեանց մէջ Աստուծոյ կամացը յանձնուիլ:

— Ո՞ի մոռնար , ըստ , որ պատերազմի արշեստը անդութ է , քու պարտիգ է գլխաւորներուն հնազանդ ըլլալ . կրօնքը քեզի կը պատուիրէ որ քու թշնամիներդ ալ իբրև եղբայր ընդունիս , տկարներուն խնայես , անմեղները պաշտպանես և մարդասիրութեան սկզբունքը քու յաղթանակներուդ ընկեր ըլլան . Քեռնարդոս պատասխանեց թէ կամ կը մեռնի կամ պատուով և ուկւոյլ կը դառնայ :

Պատերազմական փողը ճամբայ ելլալու նշանը տուաւ . ու զօրաց գունդերը ճամբայ ելան . աս երկու պատանի զինուորներն ալ մէկտեղ սկսան հեռանալ զինուորական աստիճան մը ընդունելու յուսով , թողուցին իրենց գեղեցիկ երկիրը ու գացին պատերազմի վտանգներու մէջ զիրենիք դնելու :



## ԳԼՈՒԽ Դ.

Քահանայորիւն .

(արժանաւոր պատիւ) :

ԵՅՆ միջոյներուն որ Վաղղվացոց բանակը զօրաւոր տէրութեան մը վրայ մաշ և սարսափ կը տարածէր , Ֆէլիչէն իրեն աշխատանաց փոխարէնը ընդունեցաւ լմնցուցած ըլլալով իրեն ուսմունքները և նորմնայութեան ընթացքը . իր մեծաւորները ժողվուեցան և հարցաքննելով զինքը անանկ դոչ եղան իր պատասխանատուութենէն որ իմացուցին իրեն թէ ինքը արժանաւոր է քահանայական պաշտաման որուն համար այնչափ ատենէ 'ի վեր դատիարակուած էր : Յաջորդ չորեքշաբթին իրեն ձեռնադրութեան հանդէսը եղաւ :

Ե՞ն օրը որ ինքը առջի անգամ՝ սլատարագ պիտի մատուցանէր ժողովուրդը դիզուած էր 'Անսսի մայր եկեղեցւոյն գաւ-

թին մէջ, որոնք կ'ուզելին տեսնալ ան եւ  
բիտասարդ քահանան որ այնչափ մեծամեծ  
յոյսեր տուած էր : Եվկեղեցւոյն գոները  
բայցուեցան անհամբերութեամբ սպասող  
հաւատացեալներուն, որոնք անհամար  
բազմութեամբ եկեղեցին լեցուցին . զար-  
մացմամբ կը դիտելին այն սուրբ տեղոյ  
մեծվայելցութիւնը, շքեղ հանդէսը, իրեն  
զարդարանքը և աս հրաշալի պաշտաման  
հանդերձանքը : Դահերուն բոյը եկեղե-  
ցւոյն մէջը կը լուսաւորէր . սիւները ծաղկե-  
պսակներով պատած էին և խել մը տղաք  
ձեան պէս ձերմակ և պայծառ ասուէ,  
պատմուժաններ հազած կողովներով ծա-  
ղիկներ կը բերէին ու գետինը կը սրփ-  
ուէին :

Երկու կարգ պատկառելի քահանայներ  
ծանր քալուածքով մը եկան նստեցան մե-  
ծագին դիպակներով պատած ալմոռներու  
վրայ . ասոնց մէջ երեցաւ նաև Գեղշեն  
մեծագին զգեստներ հազած, և մօտեցաւ  
սրբութեան սրբոց կրօնական և աղնուական  
ծանրութեամբ մը : “Ուագարանաց ներ-  
դաշնակաւոր նուազը կը միանար քահա-  
նայից քաղը ձայնին հետ, ու սրբազն եր-

զերը կը բարձրանային խնչուան երկինք իր ըե-  
անոշահոտ սուրբ խնկոյ բուրմունք :

Փելիչէն հազիւ թէ լմնցուց աս սրբա-  
զան հանգէսը և կատարեց սրբագործու-  
թեան խորհուրդը, իջաւ խորանէն, աղ-  
նուական քաղուածքով մը ճղքեց բազմու-  
թիւնը և եղաւ բնմը :

Փելիչէն մարդկային կենաց ան տարիքը  
հասած էր որ հոգւոյ և մարմնոյ գեղեց-  
կութիւնը պայծառ կը փայլի . իրեն կեր-  
պարանքը աղնուական էր և քաղցր, հա-  
սակը բարձր, ճակատը լայն, և նայուած-  
քը վսեմ : Ճամեստութեամբ ողջոյն տուաւ  
բազմաթիւ ունինդրաց, և աղդու խօս-  
քերով սկսաւ բայատրել կրօնքին աղնու-  
թիւնը : Ճամարձակ խօսեցաւ մարդկայ-  
ին ընկերութեան ապականիշ ախտերուն  
դէմ, և աչաւոր կերպով մը նկարագրեց  
ան պատիմները որոնք պատրաստուած են  
անոնց համար : Իր ձայնը՝ որ առաջ մեղմ  
էր և նուրբ, ան միջոցին զօրացաւ աչա-  
ւոր որոտման ձայնի մը ալէս, որով բոլոր  
մտիկ ընուխները կը դողացնէր, կը կարծէին  
թէ երկինքը կ'որոտայ իրենց գլխուն վրայ,  
և յափիտենականութեան անդունդը բա-

ցուած է ոտքերնուն տակը : Բայց երբոր  
Փելիչէն յանկարծ խօսքը փոխելով սկսաւ  
նկարաղբել արդար և մաքուր խղճի մը հան-  
գարտութիւնը և նոյն անմեղ ողիներուն  
համար խոստացուած փոխարքէնը , ունին-  
դիրները քաջալերուեցան և վստահութեամբ  
զիրենք Աստուծոյ անսպառ բարութեանը  
յանձնեցին :

Ինքը իր խօսակցութիւնը ընցուց բայց  
իր ունինդիրները խորին լուլեամբ ապ-  
շած դեռ ուշ կը դնէին . մինչեւ վերջապէս  
մեծամեծ գովեստներով աս լուլեանը  
վերջ եղաւ . և ժողովուրդը խոնելով վա-  
զեց ամպիտնին չորս կողմք : Փելիչէն քանի  
մը երախտագիտութեան խօսքեր ըսելէն վիր-  
ջը տուաւ իր օրհնութիւնը , և բազմու-  
թեան աչքէն աներևոյթ եղաւ որոնք կար-  
ծես դեռ կը լսէին աս երիտասարդ քարոզ-  
չին ձայնը . անոր Ճարտասանական գեղե-  
ցիկ զրյուածքը այնչափ ազդու էր որ կար-  
ծես թէ իրենք զիրենք ան երջանիկ ու երկ-  
նաւոր դաւառը յափշտակուած կը սե-  
պէին :

Փելիչէին բարի համբաւը ամէն տեղ  
տարածուեցաւ քիչ ատենի մէջ անհաւա-

տալի կերպով . քաղցին մեծամեծներն ու  
նշանաւոր անձինքը միշտ զինքը կը փրնաւ  
ուեին . վասն զի ինքը իր անձին համար  
որշափ որ անաշառ էր , ուրիշներուն այն-  
չափ ներողամիտ էր . իր աստիճանին վայ-  
լած պարկեշտութեան պատիւը կը պահէր .  
և մնափառութեան խորհուրդներ , որ իր  
յառաջադիմութեան պատճառով կրնային  
միաքը զալ , ամենեին տեղիք չէին գտնար  
իր սրտին մէջ . հաւատարիմ էր աւետա-  
րանի պատուիրանքներու , և իր ուզածին  
համեմատ չէր մեկնէր զանոնք , և անխո-  
տոր կը հետևէր ան ազնիւ և ապահով  
ճամբուն որն որ աւետարանը կը սորվեցնէ  
քրիստոնէից : Դժբաղդութեան անունը  
իրեն համար քաղցը ու նուիրական անուն  
մըն էր . անոր համար այնչափ զոհ չէր  
ըլլար երբոր անանկ դժբաղդներու օգնէր  
որոնք իրեն բարերարութեանը կը դիմէին ,  
այլ ինքը կը փութար ու ետևէ կը լլար  
գտնալու զանոնք և այնալիսիներուն օգնե-  
լու . կորսուած կը սեպէր ան օրը որ իր  
նմաններէն մէկուն բարերարութիւն ըրած  
չըլլար :

Այն ժողովրդակետը որ զինքը իր քուիը

ընդունած էր Այանսի հասած ատենք՝ հիւ  
ւանդացաւ . Փելիչէն շուտ մը իրեն գնաց :  
և ամենայն կերպով հոգ ու խնամք ընելով  
կը ջանար թեմեցնել խեղձին տկարութիւ-  
նը . բայց հիւանդութիւնը քիչ ատենի մէջ  
շատ ծանրացաւ . և բարեկամաց ազմքներն  
և խնամքը չկրցան ետ դարձնել մահաբեր  
հարուածը , և մեռաւ Վաստուծոյ պատուա-  
կան աս ծառան Փելիչէն բազկացը մէջ ,  
յանձնելով իրեն բոլոր ժողովրդապետու-  
թեան մէջ գտնուած աղքատները :

Փելիչէն յուղարկաւորութեան ամէն հան-  
դէմները ընցնելէն ետե , փութաց երթալ  
ու մխիթարել աղքատները և աղատել ա-  
նոնք իրենց թշուառութիւններէն : Հասա-  
րակաց կարծիքն ան Էր որ Փելիչէն պիտի  
յաջորդէ վախճանելցն տեղը . իր գերա-  
գանց բարեսպաշտութիւնն և ամենուն բա-  
րիք ընելու ջանքը արժանի ըրին զի՞նքը աս  
պաշտամանս : Այանաիի եպիսկոպոսը փու-  
թացաւ հաստատելու աս ընտրութիւնը ,  
և Փելիչէն աս ամենահարկաւոր պաշտօնա  
յանձն առաւ :

Ժողովրդասիետութեան պատիւը առած  
օրը , բարեին բոլոր պաշտօնատէրները հան-

գացեր էին . իրեն ցըսուցած յարդումիւն-  
նին , նշան մըն էր իր առաքինութեանցը  
և համաձարոյն վրայօք ունեցած այնչափ  
համարմունքներնուն : Փելիչէն պարապը  
ընհանեց անոնց ակնկալումիւնները : Իր  
ներողամտութիւնը սիրելի ըրաւ զինքը ժողո-  
վըրդեան . ամենուն բերանն էր իր գովիստ-  
ները , առանց իրեն հարցընելու բան մը  
չէին որոշեր , ու իրեն մեծամեծ առաքի-  
նութեանցը համար ինքը բոլոր իր ձեռքին  
տակի եղած ժողովրդեան խորհրդատուն և  
բարեկամը եղած էր : Վղբատները իր խնա-  
մոցը առաջին մասնուքն էին . խիստ անա-  
շառ վրէմինողիր էր ծուլութեան և հետևա-  
բար անկի առաջ եկած ախաերուն . և աս  
իր իմաստութեան և բարութեանը համար  
արդարապես արժանի եղած էր ամէն բա-  
րի մարդկանց համարմանը և մեծարանայ :

## ԳԼՈՒԽ Ե .

Երկու զինուրեներ :

(Անասնակ կիրք) :

ՓԵԼԻՉԵՆ օր մը եկեղեցիէն ուրիշ  
տեղ մը երթալու ատենը հանդիսեցաւ եր-  
կու զինուրեներու որոնցմէ մէկը ձեռնատ  
էր , և մէկալին ալ մէկ սրունքը պակաս , ա-  
սոնցմէ մէկը սկսաւ քանի մը խօսքեր նետել :

— Կարելի բան է , ըստ , որ ՓԵԼԻՉԵՆ  
չանչնայ իր Բնոնարդոս բարեկամը , որ  
եկեր է պաշտպանութիւն խնդրելու՝ իրեն  
ու իր ընկերոջը համար . մենք Ապանեայէն  
կը դառնանք թնդանօթի գնտակներէ աղէկ  
հարուածներ կերած . բայց վերջապէս մէ-  
կերնուս թևը կտրելով մէկալին ալ սրունքը  
դեռ աշխարհքիս մէջն ենք :

— Պատերազմի մէջ այնպիսի կորուստ  
ները , ըստ ժողովրապետը , պատուաւոր

են, և կը ցուցնեն թէ դուք պատերազմի  
դաշտին մէջ քաջ դժուռեր էք :

— Ծառղ Պիետրոսը պատմէ թէ ինչողէս  
քաջովմեամբ պատերազմեցանիք . պատե-  
րազմ մը չեղաւ որուն մէջ իւրաքանչյւրնիս  
հարիւրէն աւելի հրայան պարպած շրլանիք .  
Ես միայն անտարակոյս հազար հոգի մը  
սպաններ եմ թշնամիներէն :

— Ապրիս . կերենայ որ դու աղէկ  
կարիճցեր ես, ժպտելով մը սպատասխան  
տուաւ Ֆէլիչէն . հազար դու Պիետրոս  
քանի՛ հազար հոգի մեռացիր թշնամինե-  
րէն :

— Ո՞չ մի ըսեր ովտէր ժողովրդապետ .  
թէ որ կարենայի դուշակել որ այնչափ  
ծանր աշխատանքներէն ետքը մէկ թևս  
ալ սիստի կորսնցնեմ, իմ երկիրս կը մնայի  
հոն աշխատելու համար :

— Պիետք չէ ցաւիլ երբոր մարդ իր  
անձին պարտքերը աղէկ կատարած ըւ-  
լայ . որովհետև Աստուած հաշիւ կը բրո-  
նէ մեր կենացը մէջ քաշած նեղութիւններ-  
նուս :

— Ամենայն կերպով իրաւունիք ունիս .  
բայց մարդս կը փափաքի որ աս աշխարհիս

վրայ ալ դեռ քանի որ կենդանի է վարձք  
մը առնէ :

— Ես ալ քեզի պէս կը մտածեմ՝ Պիետ-  
րոս . և թէ որ կարենանք երկուքնիս մէկ  
տեղ մտնալ Փարիզու զինուորաց այն գե-  
ղեցիկ անկեղանոցը , ալ բնաւ վէրքս չեմ  
մտածեր . և հոն իմ մնացած կեանքս հան-  
գրատեամբ կ'անցնեմ . բայց խիստ աղէկ  
կ'ըլլար և ուզածնիս շուտով կը կատա-  
րուեր թէ որ տէր ժողովրդապետը մեզի  
յանձնարարութեան թուղթ մը տար :

— Չեր ծառայութիւնները ամենէն զօ-  
րաւոր յանձնարարութիւնները պիտի ըլ-  
լան :

— Չիրաւի պէտք էր որ ասանկ ըլլար .  
բայց ես տեղն՝ ի տեղը քեզի պատմեմ՝ զլուխ-  
նիս եկածը . Յմրովատերոյի պատերազմին  
մէջն էինք , երբոր թնդանութները սարսա-  
փելի կերպով կ'որոտային . Պիետրոս առա-  
ջին կարգին մէջը՝ կը տեսնար աներկիւղքա-  
ջութեամբ որ իր ընկերակիցները ետեւէ ետեւ  
ամէն կողմէն կիյնային . ու ինքը առանց  
տեղէն շարժելու միակերպ կրակ կը նէր .  
մէկ անիծեալ ուումբ մը ինկաւ ան տեղը  
ուր որ ինքը կեցեր էր , և թեր առաւ տա-

ըստ : Ես երբոր իրեն իշխալը տեսայ ան ասախճան վախցայ , որ ուզելով իրեն օդ նութիւն հասնիլ , մէկդի նետեցի իմ հրացանս , և տեղէս հեռանալով զիս վտանգէն ազատեցի առանց դիտնալու ինչ ընելիքս , և որ երթալս , և գժբաղդութեամբ թնդանօթներու սլատուարի մը տակ զտայ զիս որոնք կրակ կը թափէին վրաս . այն միջոցին որ ես անկէ կը հեռանայի եկաւ զարկաւ զնտակը և ջախջախեց սրունգս : Երբոր խելքս գլուխս եկաւ տեսայ որ կաղացեր եմ . զիս հիւանդանոցը տարին ուր գտայ Աթետրոսը . երկուքնիս ալ մէկտեղ առողջացանք . և հազար մէկ աշխատանքէ ետև դարձանք մեր հայրենիքը : Երբոր Փարիզ հասանք խրնդիցինք որ անկարող զինուորաց անկելանոցը մտնանք , բայց ինչպէս որ կ'ուզէինք անանկ չյաջողեցաւ . առին մեր զկայականի թուղթերը , և շատ անդամ՝ կրկին և կրկին մեզի խաւրելէն ու առնելէն ետքը , վերջապէս բանը տսանկ լմնցաւ թէ Աթետրոսը երբոր ատենը զայ կրտնայ մտնալ անկելանոցը , բայց ես իրաւոնք չունիմ : Օխ յանդիմանեցին իմ կարդս թողուս համար , սպատերազմին անանկ սաստկացած

միջոցը և թէ վասութիւն է եղեր քրածս  
որ վտանգի ատեն փախեր եմ. և թէ ան-  
կելանոցը քաջերուն վարձ տալ մըն է ե-  
ղեր, և ալ ուրիշ հազար ու մէկ շատախօ-  
սութիւններ որչափ որ կուզես : Կատ ջա-  
նացի զիրենք համոզելու թէ լրածս մար-  
դասիրութեան ու Պետրոսին օպնելու հա-  
մար էր, որով թողուցեր էի իմ կար-  
գըս . բայց և ոչ մտիկ ընող կար ըսած-  
ներուս . և հիմա նայէ թէ երկուքնիս ալ  
ուր ենք :

— Խիստ արդարութեամբ եղեր է ատ  
որոշումը, որովհետեւ վատը ոչ երբէք  
իրնայ քաջերուն հետ վարձատրուիլ :

— Խ՞նչ կ'ըսես Փէլիչէ, այսինքն տէր  
ժողովրդապետ, կը հաւատաս ուրեմն որ ես  
վատութեան համար պատերազմին դաշտը  
թողուցած ըլլամ. միթէ քու խորհուրդնե-  
րուդ մտիկ ընելուս համար չեկա՞ւ աս բանս  
իմ գլուխս . միտքդ բեր ան խօսքերը որ  
պատերազմ երթալու ատենս ըսիր ինծի .  
թէ գութ ունենամ իմ նմանեացս ու զի-  
րենք իբրև եղայր նայիմ. պէտք էր ուրեմն  
որ Պետրոսը առանց օպնութեան թողուի  
որ մեռնէր . և որովհետեւ մարդասիրութիւն

մը ըրի, ուրեմն սկզբք էր որ աս ինծի միաւսակար ըլլար :

— Շատ կը ցաւեի Բնեոնարդոս թէ որ քո թշուառութեանդ ես սրատձառ եղած ըլլայի . բայց պէտք է որ ամէն բանի մէջ արդար ըլլանք . դուն իմ պատերազմած կողմիս հակառակ կողմը թշնամեաց դին գտնուեցար ու կոնքի վիրաւորուած էիր :

— Ետևէն եղեր է առջևէն եղեր է ինչ փուճ բան է . ես ան դիտեմ որ սրունդս կորանցուցի , և թէ բոլոր կեանքիս մէջ կաղ պիտի մնամ :

**Փէլիչէն խօսքը կտրեց ըսելով :**

— Աս տեսակ վէճ ընելը անօգուտ բան մըն է , իշխանութիւն ունեցողները միայն իրաւունք ունին աս բաներս որոշելու . և քու սրատքդ է հնապանողիլ անոնց : Որչափ ձեռքէս կուգայ կը ջանամ դիւրայնել որ հիւանդանոց մը կարենաք մննալ ու հանգըստութեամբ օրերնիդ անցնել . բայց առաջուց քեզի կը ծանուցանեմ որ եթէ վարքդ առջնին պէս գէշ ըլլայ , չես կընար կենալ հոն : Խոկ քեզի Փէտրոս կուտամ յանձնարարական թուղթ մը ինչպէս որ կը փափաքիս . յուսամ որ անով քու վարք

ձատրութիւնդ կը փութացնեն , վաղը առաւօտ երկուքնիդ ալ ինծի եկեք որպէս զի ինչ որ պիտի ընէք նէ ըսեմ ձեզի : Այս խօսքերս լմնացնելով Գիշէչէն եկեղեցիէն դուրս ելաւ : Բնոնարդոս բարեկացած աչքերով խել մը ատեն ետևէն նայելէն վերջո , սկսաւ արհամարհելով մը ըսել :

— Վմքարտաւանին մեծն է սա որ եռչ կուզէ իր բարեկամները ճանչնալ , և սիրամարդի մը ոլէս հպարտութեամբ ուռած է ինչո՞ւ վասն զի բաղզը բաներ է . սնիծեալ ճակատագիր , կընայի ես ալ իրեն պէս ըլլալ . ի՞նչ , միմէ դժուարին բան մը է ժամագիրը մը կարդալ , քանի մը հայր մեր ու Լիթանիա ըսել :

Պիետրոս անոր խօսքը կտրեղով ,

— Լուռ կեցիր , ըսաւ , ամէնքը զինքը կը գովեն , և պէտք չէ ան մարդկանց վրայ գէշ խօսիլ որոնք մեզի աղէկութիւն ըրածնեն :

— Ի՞նչ աղէկութիւն , ես իրեն հարկաւորութիւն մը չունիմ անկելանոցը մը նալու համար :

Երկրորդ օրը աս երկու բարեկամները Գիշէչէն գնացին , որոնք լսաւ կերպով ըն-

դունեցաւ . Պետրոսին յանձնաբարական զիր մը տուաւ պատերազմի պաշտօնէին տալու . ուրիշ մ'ալ Շեռնաբղուան տուաւ անկեղանոցի մը վերատեսչն տալու համար . յորդորեկով զինքը աղէկ ու բարի վարք մը անցնելու և միանգամայն ապահովեցնելով զինքը որ կը պաշտպանէ միշտ թէ որ իր տուած խրատներէն դուքս չեղեք : Երկուքին -ալ տուաւ յիմնական ֆրանք ճամքու ծախքի համար և արձրկեց . միտքը դնելով որ ըրածը սրբազան պարտք մընէր որուն վարձքը միայն երախտագիտութիւնը պիտի ըլլայ :

— Ահ , ի՞նչ գեղեցիկ գործք ողբամութեան , սկսուաց Շեռնաբղու , քանի մը ֆրանք ձեռքբերնիս դնելով կարծեց թէ ալ մեզի ընեղու սկարտ մը չունի . խիստ դիւրին բան է ասանկ աժան կերպով վրայէն նետել իր ամենէն աւելի հին բարեկամը , անանկ բարեկամ մը որ իրեն ընկերելու համար ամէն բան թողոցներ է . ոչ ինչպէս կուզէի մեր գեղը երթալ ու ամենուն քարոզել ասերկնային պատանւոյն անարդ սիրու :

— Կսկէ յարմար բան չես կընար ընել Շեռնաբղու , որ զքեզ գեղէն վրատեն :

— Առ բարեսիրտ գեղացիները զինքը  
տուրքի տեղ դրած են . վասն զի քանի որ  
Հարստացաւ՝ իրենց եկեղեցին խել մը աղ-  
նիւ ընծաներ տուաւ :

— Ինչ որ կուզես ըսէ , խիստ ազնուա-  
սիրտ մարդ է , մեզի ամէն մէկերնուս յիշ-  
նական ֆրանք տուաւ , և ձեռքէն եկածէն  
աւելին ըրաւ . չեմ հասկընար . թէ դուն  
գեռ ի՞նչպէս կը զանգըտիս :

— Ի՞նչ ըսել է , խիստ լաւ կերենայ  
իր ազնուութիւնը . մանաւանդ որ երբոր  
ուզեր կընար զիս ալ քեզի պէս զինուորաց  
անկելանոց մը դնել տալ :

— Ո՛չ սիրելի բարեկամ շիտակին ըսեմ  
դուն ատ բանիդ ամենեին արժանաւորու-  
թիւն չունիս . զիտես որ բանակին մէջնալ  
քու համբաւդ այնչափ դէշ ելած էր , որ  
եթէ ես չուլայի դու քանի քանի անոգամ  
կը վարնսուէիր զօրաց գունդէն , աս բաներա  
աղէկ միտքդ բեր :

— Ե՞՞չ ի՞նչ ըսել է , դուն աղէկ աղէկ  
կը խօսիս , որովհետեւ ողածդ եղաւ . . . :

Խմալարտքս տատուով կատարեցի , ի՞նչ  
պէս վկայականներէս ալ կ'իմացուի :

— Թէ որ իմ վկայականներու դէշ են ,

յանցանքը որունն է : Չես գիտեր որ ես  
չեմ ուղեր պատերազմի երթալ . դու զիս  
համոզեցիր , որպէս զիս եմ կորստեանս պատ-  
ճառ ըլլաս :

— Թէ որ լաւ քրիստոնեայ ու առա-  
քինի մարդ մին ըլլայիր , չեիր ստիպուեր  
թողուլ քու վիճակդ :

— Ինչ մեծ մեծ կը ջարդես , ինծի կու-  
զես հասկցնել թէ դու քանի զիս աւելի լաւ  
քրիստոնեայ ես :

— Ինչ ըսել է . կը տարակուսիս ասո՞-  
վենոնարդոս . ես Աստուծոյ անունը ամե-  
նեին շեմ հայհոյած , և սմէն ատեն ա-  
ղօթք կընէի իրեն ու առանց իրեն օվնու-  
թիւնը ինողբելու ամենեին պատերազմի  
շեմ գացեր :

— Եհա խիստ լաւ կը տեմնամ թէ ինչ  
պէս Աստուած պաշտպանեց քու թեդ :

— Եյո թես չի պաշտպանեց . բայց  
հիմայ վարձք կուտայ ինծի :

— Օքեզ ոչ երբէք ասանկ խորձահար  
տեսած էի : — Գլխուս եկած դժբաղդու-  
թիւնները իմ հաւատքս կենդանացուցին :

— Իրաւ որ դու բազդաւոր ես եղեր .  
որովհետեւ ան չարիքներն որ իմ զլխէս ան-

յան զիս աւելի անհաւատ ըրին . և թէ որ  
Աստուած այս աշխարհքիս վրայ ուզէ ար-  
դարութիւն ընել . առջի արդարութիւնը  
ան կը լայ , թէ որ պատմէ ատ անիծեալ  
քահանան , զորն որ կատեմ բոլոր ոգւովս :

— Ո՞չ Շեոնարդոս աս ինչ չար բնու-  
թիւն ունիս . թէ որ դու ժողովրդապետին  
վրայ դեռ գէշ խօսիս , գիտցիր որ զքեզ կը  
թողում :

— Տէր ես . ի՞նչ գեղեցիկ կերպ է ասի-  
կայ շնորհակալ ըլլալու ան թուղթին հա-  
մար , որ Փէլիչէն իմ պատճառաւս քեզի  
տուաւ . վասն զի ինքը զքեզ և ոչ ալ կը  
ճանչնար :

— Չեմ կարծեր որ քու ճանչուորու-  
թիւնդ իրեն դիմացը մեծ բան մը արժէ .  
վասն զի արդարութիւնը ամեն բաննէ վեր է :

Կս կերպով Պետրոս գլուէն անցած ա-  
ղէտալի փորձով լուսաւորուած ու խրա-  
տուած , իրեն պատանեկութեան ատենը  
ունեցած բարի սկզբունքներուն նորոգուիլը  
կիմանար . քիչ մը ատեն միաքը տաքցեր ու  
բոնկեր եր զինուորութեան մէջ իր քաջու-  
թիւններուի առաջ երթալու յուսով . բայց  
հանդիպած ձախորդութիւնները իրեն յոյսը

պարապը հանելով, վերջապէս Առտուծոյ  
նախախնամութեանը յանձնեց զինքը . որ  
մեր վրայ կը հսկէ : Իսկ ըստ հակառակն  
Բեռնարդոս իրեն պատահած դժբաղդու-  
թիւններով աւելի անհաւատ ու տժգոհ է-  
ղեր էր : Չախորդութիւնները զինքը կատ-  
ղեցուցեր ու չարացուցեր էին, և փոխանակ  
դառնալու 'ի բարին քաշած նեղութիւննե-  
րէն խրատուելով, չարութեան մէջ աւելի  
հաստատուեր էր : Առ տարակոյս չկայ մէ-  
ան մարսն որ բանի մը չի հաւատար, ոչ  
երբէք կանոնաւորեալ և պատշաճ կեանք  
մը կըրնայ ունենալ : Իր ծիծաղելի փառա-  
սիրութիւնը այնչափ կատղեցուցեր էին զին-  
քը երկրիս վրայ եղած իշխանութիւններուն  
դէմ որ պատրաստ էր ինչուան Առտուծոյ  
իշխանութիւնն ալ ուրանալու :

Պետրոսին ու Բեռնարդոսին մէկ մէկու  
դէմ ունեցած դժկամակութիւնը բոլոր իրենց  
ճամբօրդութեանը մէջ տեսեց . բայց Փարիզ  
հանելով, տեսան որ իրարու օգտակար  
կըրնան ըլլալ, ուստի ստիպուեցան իրարու  
հետ միանալու քիչ մը ատեն ալ : Ֆէլի-  
չէն տուած յանձնաբարական թուղթը  
խիստ աղէկ բանի եկաւ . Պետրոս ունկըն-

դրութիւն ունեցաւ պաշտօնէին դիմացը , և  
անով լաւ հասկցաւ թէ ինչպէս պարտական  
էր երախտագէտ ըլլալ ժողովքրդասկետին՝  
յանձնաբարութեսն թուղթը ձեռքը առա-  
ծին պէս պաշտօնեայն՝ շուտ մը որոշեց որ  
անկելանոցը մտնայ , և Գաղղիոյ թագա-  
ւորն ալ , լէգէոն պատուոյ՝ ըստած նշանը  
պարզեց : Պիտրոս երջանկութեան ծայրը  
հասած՝ չէր գիտեր ինչպէս շնորհակալ ըլ-  
լայ պաշտօնէին իրեն ըրած այնշափի բա-  
րեացը համար . և շուտ մը զնոսոց Շնոնար-  
դոսին ալ խմացուց թագաւորին շնորհած  
առ մարդասիրական վարձատրութիւնը :  
Իր ուրախութեան մէջ միշտ Փէլիչէին ա-  
նունը օրչնելով բերանը կառնէր . և ամե-  
նայն յաջողութիւն կը մաղթեր իրեն : Շնո-  
նարդոս պաղած մնաց երբոր խմացաւ թէ  
Պիտրոս ոչ միայն անկելանոցը մտեր է ,  
հասկա նաև պատուոյ նշանով ալ զարդա-  
րուեր է . ու տեսնելով որ Փէլիչէին օգ-  
նութեամբը աս բանս յաջողեր է , յուսա-  
հատութիւնն ու Փէլիչէին գէմ ունեցած  
կատաղութիւնը սաստիացաւ : Եղն ատեն  
ընդունեցաւ Պիտրոս , պատուոյ խաչը և  
անկելանոց բնակելու վկայականը . և շուտ

մը Փեղիչելին ալ շնորհակալութեան թուղթ  
մը զրեց . զրկեց իր դժբաղդութեանը ըն-  
կերը , և անոր հետ գնաց ան մեծագործ  
ընակարամնը որ Գաղղիոյ պարծանիք եղող  
թագաւորներէն մէկուն ամենամեծ բարիքն  
էր :

Շեռնարդոս բաժնուեցաւ Պետրոսէն ,  
և չէր կրնար դիմանալ անոր երջանկու-  
թեանը . ան աստիճան նախանձը զինքը կը-  
մաշէր , որ կեանքը երթալով դառնացաւ  
իրէն :

Փեղիչելին տուած յանձնարարական  
թուղթը բանի գալով Շեռնարդոս Փարիզու-  
լաւ հիւանդանոցներէն մէկուն մէջը մտաւ ,  
ուր առատ և առողջարար կերակուր կը-  
տրուէր , ամէն հարկաւոր եղած հոգը ու-  
խնամքը անալտկաս էր թշուառ հիւանդաց  
և ծերերուն :

Ան տեղի բարեկարգ կեանքը Շեռնար-  
դոսին բանին ձեռք չի տուաւ . ինքը զի-  
նուորութեան մէջ գէշ սովորութիւնն մը ը-  
րած էր սաստիկ ողեղից բանկելիքներ խմե-  
լու , ու ժամանակը ուտելով խմելով զինե-  
տուններու մէջ անցընելու . ուստի հոս ալ  
աս զբուանաց ծախքերը հանելու համար

միացաւ քանի մը դատարկասպորտ գողերու  
չեա , որոնց երջանկութիւնն մը սեպուած  
էր աս արհեստը :

Հիւանդանոցին մէջ սկսան ստեղ զու-  
ղութիւններ պատահիլ և ան միջոցին որ ե-  
տեւէ էին զողը գտնալու , առանց աս երի-  
տաստրդին վրայ կասկած մը ունենալու՝ ին-  
քը փութաց աներեւոյթ եղաւ . և իր աս փա-  
խուստը , ամէն տարակոյս վերցուց թէ ին-  
քը եղած պիտի ըլլայ զողը :



## ԳԼՈՒԽ Զ.

Նորադանի լևուանիք մը :

(Գործք սղորմուրեան) :

ԵՐԵՈՐ ՇԵՌՆԱՐԴՈՍ ԻՐԵՆ գէշ վար-  
քովը Փելիչէին ցըցուցած մարդասիրական  
խնամքը պարապը կը հաներ , աս սրբա-  
կրօն քահանայն նոր տեսակ առաքինի գոր-  
ծողութեան մը ձեռք զարկաւ . խեղճ ըն-  
տանիք մը եկեր էր իրեն ժաղովրդապետու-  
թեան մէջ բնակելու համար . Փելիչէն ա-  
սոնց կարօտութիւնը իմացածին պէս մէկէն  
փութացաւ օգնելու . բայց չար նախանձը  
սկսաւ գէշի մեկնել ասոր բարի դիտաւո-  
րութիւնները և բարեպաշտական ընկերու-  
թութիւնը :

Քանի մը կոյր նախանձայոյզ մարդիկ  
որոնք չափէն եւել կրօնքի նախանձ կու-  
զէին ցուցնել , առանց գիտնալու թէ ո՞րն

է գթութեան սպարաքը , իրեն գեմ զինեցան . ասոնցմէ մէկը Փելիչէին ներկայացաւ և իմացուց որ այս ընտանիքը նորողանդէ , Փելիչէն պատասխանեց , — Այո ես ալ զիտեմ :

— Աս բանս կրօնիքի չափաղանց թոյլտուռթենէ առաջ կուգայ ըաւ , տէր ժողովրդապետ , որ ուղղափառ աղքատներուստակը առնես և նորողանդներուն համար գործածես , որոնց ալիտի օգնեն իրենց քահանաները :

— Ամէն քրիստոնեայք եղբարք են . և իրենց թշուառութեանը մէջ իմ առջես ուղղափառէ մը տարբերութիւն չունին :

— Բայց յոյս մը ունիս արդեօք , որ զի՞րենիք ձշմարիտ հաւատքի բերես :

— Ես գոհ կ'ըլամթէ որ իրենց փորձով ցույնեմ իմ կրօնիքիս վարդապետութիւնը :

— Բայց իրենց օգնելէդ առաջ՝ սկզբէր դաշնկը մը դնել հետերնին :

— Աւետարանը մեղի կը պատուիրէ կրօնիքը սիրցընել , չէ թէ բոնադատել որ ընդունին :

— Վարծեմ թէ հրամանքներնուդ ձար-

տասանութիւնը աս խնդրոյս մէջ խիստ աշուղէկ բանի կրնար գալ :

— Կրօնքը հարկաւորութիւն չունի անանկ արտաքին դարդերու . ինքնիրմէ շատ աւելի զօրաւոր է և կարօտ չէ որ մարդկային համաձարը իրեն օդնէ : Առւրբ զիրքը մեղի կը հրամայէ որ օրինակ տալով քարոզենք , ես ալ կը ջանամ Աստուծոյ ասխօսքէն դուրս չելլել :

— Ենանկ է նէ ի՞նչ կը մտածէք սա մարդկանց վրայ :

— Բան մ'ալ չեմ մտածեր . հապակ կ'սպասեմ որ սրտերնին շարժի ու իրենք իրենցմէ դառնան ու դան մեր կրօնքին :

— Իսկ թէ որ չիգան , հրամանքնիդ եւ կեղեցւոյ ստակը քանի մը ապերախտներուն համար վատնած պիտի ըլլաք :

— Եւետարանին խօսքերուն հետևած կ'ըլլամ որ կը պատուիրեն սիրել մեր թշնամիներն ու ծառայել անոնց : Ես երկու առաջնորդ ոմակմ ինծի , Աստուծոյ աւետարանը , և իմ վիճակիս պարտքերը :

Ֆելիչէն այս մերջի խօսքերս ըսելով ճամբեց զատ մարդը , որ գնաց ու այս խօ-

սակցութիւնը իր կողմնակիցներուն պատմեց . անոնք ալ մէկէն , Փէլիչէին դէմ գիրք մը հրատարակեցին , որուն մէջ Փէլիչէն կը յանդիմանէին իրրե թէ իր անձնական շահուն համար կրօնքին օդուտները ոտքի տակ կառնէ : Փէլիչէն հանդարտ սրտով կը լսէր աս իրեն դէմ եղած զրադարտութիւնները , և առանց խոռվիլու միշտ կօգնէր այն դժբաղդ ընտանիքին , և առանց նայելու ան ագէտներուն աղաղակին իր հաստատուն ընթացքը առաջ կը տանէր : Իսկ նորադանդ ընտանիքը զարմանալով աս գերյարգոյ քահանային ներողամտութեանը վրայ , անոր խնամոցը յանձնեցին զիրենք , և հայրերնին Փէլիչէին զալով ըստ : Երբոր ամէնքը զմեզ երեսէ թողոցեր էին , հրամանքդ մեզի օգնեցիր . քու իմաստուն խրատներդ և սրտաշարժ մխիթարական խօսքերդ , մեր անմխիթար յուսահատ վիճակը մեզի քաղցրացուցին . մենք ամէն կերպով միշտ սլարտըկան ենք երախտագէտ ըլլալու քեզի , և Աստուած՝ քու առաքինութիւնդ զործիք առաւ սուրբ եկեղեցւոյ գերազանց վարդապետութիւնները մեր աշքին ցուցընելու համար վասն զի

նոյն սուլք արարողութիւններն ու սրբազնի զոհը որ հաւատացելոյ փրկութեան համար միշտ կը մատուցուի , ասկէց վերջու պիտի ըլլայ մեր յարդութեան և երկրագաղութեան նողատակը : Երախտագիտութեան յորդ արցունքներ թափեց Փելիչէն և շնորհակալ եղաւ Աստուծոյ որ այս ընտանիքը իր ձեռքով եկեղեցւոյ զիրկը դարձուց :

Վօտեցաւ ծննդեան օրը , և Փելիչէն պիտի մատուցանէր հանդիսաւոր պատարագը ան ժաման՝ յորում խորհուրդ ծննդեան մարդացելոյն Աստուծոյ կարդարայնէր մարդկային ազգը : Աս հանդիսին սին պատրաստութիւնը եղաւ . եկեղեցին իր ամենէն ծանրագին զարդերով զարդարուած էր , ճրագներուն սպայծառութենէն բոլոր խորանները լուսաւորուած էին , և ժողովուրդը մնութին բոլորտիքը դիպուած զարմացմամբ կը դիտէր ամենազեղեցիկ ու սիրուն մանուկիլը : Արդէն զիշերը իր ստուերանիկարքողը ձկած էր բնութեան վրայ . սրբազն յարկին տակը երաժիշտները իրենց երգերը կը նուագէին խունկերուն անուշահոտութիւնը մինչև երկինքը

կը բարձրանար , զանդակիները ամէն կողմէն  
կը հնչէին , և կէս գիշեր էր :

Վելիչէն իր սուրբ զգեօտներովը զար-  
դարուած մօտեցաւ սրբութեան սեղանին .  
քահանայները դասը լեցուած իրենց երդերը  
հրեշտակային նուազարաններու ձայնին  
հետ խառնելով կը զեղգեղէին ու ամէնուն  
աչքը Վելիչէնս վրայ էր . որուն աչքե-  
րը իրկնային հրով մը վառուած էին . իր  
հասակը եւելի բարձր կերևնար , կերսկա-  
րանքը պատկառելի , նայուածքը ահաւոր ,  
ու հողին ազատ ամեննեին մարդկային կիր-  
քերէ , կարծես երկնային հրեշտակներէն  
մէկն էր :

Արբագործութիւնը սկսաւ , և ժողովուք-  
դը ծնկան վրայ ինկած ջերմեռանդութեամբ  
կաղօթէր , ձայնակից ըլլալով քահանայից  
երդերուն . մեծ ուշադրութեամբ առաջ կը  
տանէին առ հրաշալի հանդէսը սպասելով  
ան վայրկենին որ իրենք ալ աստուածային  
հաղորդութեան մասնակից ըլլան . հասաւ  
ժամանակը ու մեծ բազմութիւն մը հաղոր-  
դուեցտւ : Վելիչէն երբոր կատարեց աս-  
տուածային պաշտամոնքը ան ատեն երե-  
ցաւ ծեր մը որ առաջ կուզար , ետեւէն իր

որդին , մանկամարդ ամսւսինը քանի մը  
պղտի տղաք հետը . ասոնց անթարթ գե-  
տինը նայելը կիմացնէր իրենց խորին յար-  
գութիւնը որով աստուածային խորհուր-  
դին կը մօտենային .

Փելիչէին թշնամիները զարմացած մնա-  
ցին երբոր տեսան աս նորաշանդ ընտանի-  
քը , որուն պատճառաւ Փելիչէին վրայ այն-  
չափ գէշ խօսեր էին :

Չորս դին դիզուած բազմութեան վրայ  
պատկառանքով մը աչքերը դարձնելով ծե-  
րունին , սկսաւ պատմել թէ ինչպէս Փե-  
լիչէին առաքինութիւնները պատճառ ե-  
ղան , որ իրենց ծագեց ուղղափառ կրօնքին  
գերազանց լոյար , և թէ անոր քաղցր մար-  
դասիրութիւնը և ժիր եղբայրսիրութիւնը  
միայն պատճառ եղաւ ու զիրենք համոզե-  
ցին աս կրօնքս ընդունելու , և ասանկով  
վերջացուց խօսքը . — Հալածումը ա-  
րեամբ կ'ողողէ զաշխարհքս , և հեղահամ-  
բոյր ներողամտութիւնը միայն՝ մարդուն  
սիրտը կը վաստըկի :

Այս կերպով յաղթեց Փելիչէն իր ա-  
նարդ թշնամիներուն , և իրենց դարձան  
ան զէնքերը որ արդարոյն դէմ ուղղեր էին

որով և ստիպուեցան խառնել իրենց աղաւ-  
չանքը անոնց աղաջանաց հետ որ երկինք  
կը բարձրանային օրհնելու քրիստոնէա-  
կան եղբայրականութեան և աւետարանա-  
կան ներողամտութեան աս Ճշմարիտ ա-  
ռաքեալը :



## ԳԼՈՒԽ Է .

Առաքինուրեան արդարացի  
հատուցումն :

ԵՐԵՌ լմբնցաւ պատարագը բոլոր  
բաղմութիւնը ցրուեցան . Վելիչէն ժամը  
թողուց իրեն հաւատարիմ ծառայներուն ,  
որ ամէն բան կարդի դնելէն ետքը բանալի-  
ները իրեն բերին . իսկ ինքը ան օրուան  
գործածած սկիհը տարաւ իր տունը ու  
ստոլիմը վրայ հազիւ թէ դրաւ , մէյմ'ալ  
լսեց որ դուռը սաստկութեամբ կը զարնեն .  
կարծելով որ իր մարդիկները ըլսան բացաւ .  
բայց ինչ տեսնայ խել մը զինեալ սրիկայներ  
չորս դին պատեցին ու բռնութեամբ կ'ու-  
զէին իր ունեցած ոսկին և սրբազն անօթ-  
ները : Վելիչէն առաւ ստոլին վրայէն սկի-  
հը ու թեկին տակը ծածկեց որպէս զի չը-  
լայ որ ձեռքերնին իյնալով պղծի անօթը :  
Կս անզգամներէն մէկը առաջ նետուե-

ցաւ ըսելով բռնեցէք դուք և ես անոր ձեռքէն կը յափշտակեմ սկիհը . և դանաւ կը կուրծքին վրայ դնելով երեսն ՚ի վեր կը պօռար , Տուր ինծի ան սկիհը ապա թէ ոչ կը մեռնիս , իսկ Փէլիչէն աւելի ուժով սխմելով սկիհը պօռաց . զարկ :

Փէլիչէին աս արիական գիմաղրութիւնը շափէն եւել զարմացոց սրիկայները , անանկ որ կանկ առին կեցան , ու չէին համարձակեր իրենց սրբալիղծ ձեռքերը ան քաջասիրտ առաքինւոյն մօտեցընել : Իրեն բարձր հասակը ահաւոր նայուածքը և սրբազն զգեստները զիրենք վերջի աստիճանի պատկառեցուցին : Այն եղեռնագործներէն մէկը միայն յանդգնեցաւ անվայել խօսքեր բերնէն հանել , և դաշոյնը ձեռքը հայհոյութիւններ ընելով կը յանդիմանէր իր ընկերաց վատասրտութիւնը : Փէլիչէն մէյմը նայեցաւ եղեռնագործին երեսը և ձանցաւ որ Շեռնարդոսն էր : — Ահա , ըսաւ , ի՞նչպէս պակասութենէ պակասութիւն , յանցանքէ յանցանք իյնալով անսղիտանութեան ծայրը հասեր ես տեսար հիմա ուր հասոց զքեզ իրօնքը բանի տեղ չդնելու . դու փախեր ես ան ապաստանաւ

ըանին որ քեզի համար դաեր էի որպէս զի քու գէշ ախտերէդ հեռանաս ուզես չուզես . քու գէշաթիւններու քեզի կախաղանք պատրաստեցին , և ինծի ուրիշ բան չմնաք բայց եթէ մէկ խօսքով զքեզ կախել տալ :

Այս աստիճանի սարսափ մը սլատեց ինոնարդոսին վրայ որ և ոչ համարձակեցաւ աշուները վեր վերցնել ու Փէլիչէն վրայ նայիլ : Իր մեղսակից ընկերները յարձակեցան վրան ու յափշտակեցին ձեռքի դաշունը որտով զինեալ էր . սկսան ամբաստանել զինկը Փէլիչէն առջեւ թէ ինչպէս իր չար ու նենգաւոր խորհուրդներուը համոզեր էր զիրենք աս անօրէնութիւնը գործելու : Ինկան Փէլիչէն ոտքը ու թողութիւն խրնգրեցին զոր սպաննելու համար եկեր էին :

Փէլիչէն ցաւած սրտով մը նայեցաւ անողորմելիներուն վրայ որ ոտքը ընկեր էին՝ և տեսնելով անոնց զղջումը սիրտը ելած ըստ : — Որչափ որ մեծ է ձեր յանցանքը այնչափ ալ Աստուծոյ ողորմութիւնը անբաւէ , և որովհետեւ թշուառութիւնը ստիսեց զձեզ որ աս անօրէնութեան ձեռք զարկիք , ահաւասիկ ձեզի ստակ . աս սեպուի զրւական ու նշան մը ձեր անկեղծ զղջմանը .

աս ըսելով՝ ձգեց անոնց առջին քսակը, և  
խօսքը Բնոնարդուսին դարձնելով ըստ :

— Սիմ՝ ուզեր հարյոնել թէ ի՞նչ պատ-  
ճառով դու ինձի թշնառի եղեր ես . և  
մեծապէս շնորհակառ կ'ըլլամ՝ Կստուծոյ  
որ ինձի ասանկ առիթ մը տուաւ կերպով  
մը փոխարէն ընեղու քու բարի հայրենակ-  
ցայդ ինձի բրած այնչափ բարիկներնուն ,  
որ տղայութեանս ատեն ամենայն խնամքով  
Հիւրնկալեցին զիս . և դու անոնց գաւա-  
ռակիցը մի վախնար , Փէլիչէն վրէժ շլրն-  
գրեր : — Փախիր քանի որ քու յանցանքդ  
տէրութիւնը չէ իմացած և ապահով եղիր  
որ ես կը ներեմ քեզի : Ազատել աւազակը  
՚ի մահուանէ խստութեան տեղ քաղցրու-  
թիւն բանեցնել , վրէժ խնդրել բարիք հա-  
տուցանելով . ահա աս եղաւ աս սքանչելի  
քահանային յիշատակի արժանի օրինա-  
կը :

Երբոր աս բարեգործութեան համբաւը  
Գաղղիայոց թագաւորին ականջը հա-  
ստ , զինքը ողորմաբաշխ անուանեց իրեն :  
Հաղիւ թէ իրեն առաքինութեանցը հա-  
մար աս նոր ստացած պատույն համբաւը  
քաղքին մէջ տարածուեցաւ , ամէնքը ե-

կան և անկեղծ սրտով շնորհաւորութիւննին կընէին :

Իսկ ինքը մէկէն ճամբայ ելաւ, և շուտ մը լորենայ գաւառը անցնելով հասաւ Գաղղիոյ փառաւոր մայրաքաղաքը . հոն տեսնալով քաղքին շնորհերուն մեծութիւնը, և յիշատակարաններուն գեղեցկութիւնը զարմացաւ . բայց որչափ առաջ կ'երթար այնչափ սիրտը կը վշտանար տեսնալով մէկ կողմանէ շատ խեղճութիւններ և մէկալ կողմանէ պաշտաններու մեծագործ շքեղութիւնը և բազմութեան ծառայից շոայլութիւնը :

Բարեգործելու անյադ փափաքը որ միշտ իրեն գործոց նպատակն էր իրեն աչքին առջեւը ոչնչացուցին աս ամենամեծ քաղքին հրաշալիքը : Ֆէլիչէն աս նոր պաշտօնիս մէջ խիստ շատ ողորմութիւն բաժնել տուաւ թագաւորին . բոլոր իր կեանքը թշուառացելոց համար նուիրեց և ինչ որ ունէր ամէնքն ալ անոնց համար կը զործածէր : Ան եկեղեցին ուր որ Ֆէլիչէն կը քարոզէր Աստուծոյ խօսքը և կըսնի մեծամեծ ճշմարտութիւնները, միշտ բազմութեամբ մարդկան լցուած էր : Ամէնքն

ալ իրեն քարովները սիրով մտիկ կընէին .  
Հոն հարուստները դաս կառնէին թէ ինչ  
պէս մարդասէր ու ողորմած ըլլալու է .  
աղքատները լաւագոյն վիճակի մը յոյս  
կունենային . իշխանները շափառը ըլլալ  
կը սորվէին . այսպէս Փէլիչէին ճարտա-  
ւանութիւնը ամենուն սիրալ կը գրաւէր :

Ո՞էկ եպիսկոպոսարան մը սկարապ մնաց .  
և Փարիզու արքեպիսկոպոսը առաջարկեց  
Փէլիչէն . շուտ մը Հռովմայ աթոռը և  
Գաղղիոյ արքունիքը հաստատեցին արքե-  
պիսկոպոսին աս ընտրութիւնը . թագաւորը  
իր ողորմաբաշխ Փէլիչէին անձամբ իմա-  
ցուց եկեղեցական աս բարձր աստիճանիս  
ընտրութիւնը : Բայց Փէլիչէն որովհեան  
առաքինի ու խոնարհ էր , անոր համար  
հրաժարեցաւ իր վրայ արժանաւորութիւն  
մը շտեմնալով աս պաշտօնիս . միանգա-  
մայն մեծապէս տհաճութիւն կը ցուցընէր  
թագաւորին քովէն բաժնուելուն համար :  
Բայց թագաւորը խորհուրդ տուաւ իրեն  
կէս մը եպիսկոպոսութեան պաշտօնին և  
կէս մ'ալ ողորմաբաշխութեան պարագերը  
կատարելու համար ժամանակը բաժնէ . և  
խօսքը լմբացուց քաղցրութեամբ ըսեղով . —

Օքեղ սիրով պարզե կ'ընեմ քու թէմիդ .  
նայէ որ առաջ տանիս քու պաշտամանդ  
մէջ ամենուն օրինակ ըլլալու փոյթդ ան  
ներողամիտ զիջողութեամբ , եղբայրսիրու  
թեամբ ու անստգիւտ առաքինութիւններով  
որոնց համար միայն կը տրուին եկեղեցական  
ասանկ բարձր աստիճանները . թագաւորին  
շնորհած պատիւները Փարիզու արքեպիսկոպութիւններուն  
պոսին ձեռքովը տրուեցաւ Փէլիչէին որ իր  
պաշտպաններուն պէտք եղած շնորհակա  
լութիւնը ընելէն ետքը , արքունական Ճո  
խութիւնները թողուց և Ճամբայ ելաւ իր  
եսլիսկոպոսական թէմը երթալու . անցաւ  
Տոֆէն գաւառը և հասաւ իր իշխանու  
թեան տեղը : Իրեն աստիճանին համե  
մատ մեծ պատուով ընդունեցաւ . բոլոր  
իշխանները քաղքին գուռը եկեր էին զինքը  
ընդունելու համար և իրեն աս մուտքն  
կարծես թէ կատարեալ յաղթանակ մըն  
էր : Իսկ ընակինները մեծապէս ուրախա  
ցեր էին ասանկ առաքինի մարդ մը իրենց  
եսլիսկոպոս ունենալնուն համար . որ իրեն  
ունեցած առաքինութեանց ու կատարելու  
թեանցը համար միայն արժանի եղեր էր  
աս պաշտօնին :

Աս նոր եպիսկոպոսին կենաց ընթացքը  
ամենելին նոյն էր, ինչ որ ժողովրդապետութեան ատենին էր. իր բազմաթիւ ծառայները ընաւ մէկու մը արգելք չէին ըլլար իրեն մօտենալու. անխտիր իր քովը կրնար երթալ աղքատ քաղաքացին ինչպէս հարուստ կալուածատէր մը կամ տէրութեան պաշտօնատէր մը. զեղսութեան կամ փառասիրութեան նշան մը վրան չէր երենար. սեղանը չափաւոր էր, ծառայները անզարդ. իր զգեստը աղքատին. և իր ամէն կերպը հին եկեղեցւոյ սուրբ հարքը յիշեցնել կուտար, երբ նշանաւոր կը լլային առաքեալ ները՝ միայն իրենց գլութեամբն և անխոնջ եղայրսիրութեամբը :

Ծէ որ մէկը բանի մը վրայ իրեն կարծիքը հարցընելու ըլլար, անանկ ոգւով կաշխատէր որ արդարութեան կողմը զօրանայ: Ժամանակը կանցընէր իր սրբազն սլարտքերը և արքունիաց մէջ ունեցած պաշտօնը կատարելու համար. և Ծէ որ հարկ ըլլար իր ամոռէն հեռանալ քիչ մը ատեն, մեծ ցաւ կը պատճառէր բոլոր ժողովրդեան :

## ԳԼՈՒԽ Հ .

Անդուր Բարեգործութիւն :

ՓԵԼՔԵՆ՝ ինչպէս որ յայտնի է ու  
բշ բանի չէր փափաքէր բայց եթէ օգտա-  
կար ըլլալ իր նմանեացը . և ահա աս փա-  
փաքը կատարուեցաւ , ու ինքզինքը նուիրեց  
անոնց համար . վասն զի երկու տարի հան-  
զիստ անցնելէն ետքը անանկ դժբախտ դի-  
պուած մը հանդիպեցաւ որ իրեն առաքի-  
նութիւնը նոր լուսով մը փայլեցուց :

Փոխադրական հիւանդութիւն մը ընկառ  
իր թէ, մին քաղաքներէն մէկուն մէջ . և քիչ  
օրուան մէջ շատ մարդ մեռուց : Բարի ե-  
պիսկոպոսը շուտ մը թողուց իրեն պալատը  
և գնայ օգնելու աս խեղճերուն . բժիշկները  
հարկաւոր սեպեցին որ հիւանդները ապա-  
կանեալ քաղքէն հեռանան թէ որ կ'ուզեն  
բժշկիլ . Փելիչէն հրամայեց որ դաշտերու  
մէջ վրաններ շինուին զիրենկը ընդունելու

Համար . ու ինքը անձամբ զլուխ կեցած իր  
ներկայութեամբը ամենուն եռանդը կը վա-  
ռէր աշխատելու : Քիչ օրուան մէջ ամէն  
բան պատրաստուեցաւ հիւանդները ընդու-  
նելու չափ . Փէլիշէն ապականւեալ քաղաքը  
չժողուց , ինչուան որ ամէնքը վրաններուն  
մէջ չի փոխադրուեցան , ու ինքը անոնց  
հետ էր , առանց մօտիկ ընելու բժիշկներուն  
ազդարարութեանը . որոնք կը սարսափէին  
տեսնելու թէ . ինչ մեծ վտանգի մէջ էր ա-  
սանկ անգին կեանք մը . բայց Ճար մը չէին  
կրնար ընել զինքը ետ կեցընելու անանկ  
մէկ գործողութենէ . մը որ ինքը իրեն սպարտք  
կը համարէր : Ա բաններուն չորս դին սպա-  
հաստաններ կեցուցին որ մօտի տեղերուն հա-  
ղորդակցութիւնը կը տրեին : Փէլիշէն ունե-  
ցածը չունեցածը և ինչ որ ձեռքը անցնէր  
ամէնքն ալ առ խեղճ ժողովրդեան ապ-  
րուստին համար կը գործածէր : Ամենայն  
յանձն առած սպարտքերուն ալ կը համնէր .  
հոգևարքներուն քովին չէր հեռանար ին-  
չուան որ չքաղցրացնէր անոնց կենացը  
վերջի վայրկեանները հաւատոյ սուրբ խոր-  
հուրդներու . առողջութեան ժողովք մը  
հաստատեր էր , ուր կերթար միշտ խոր-

Հուրդ ընելու , թէ ի՞նչ օգնութիւններ կը ը-  
նան Ճարել ան բազմաթիւ ժողովրդեան ո-  
րոնք լիցուեր էին՝ լամեղէն ծածկոյթներու  
տակ և ամէն կողմանէ արեւոն այրող ճա-  
ռագայթները ներս մտնելով հիւանդութիւն-  
նին կը սաստկացնէր և կեանքերնին եւելի  
վտանգի մէջ կը ձգէր : Բայց իրենց եպիս-  
կոսուին ազնուական օրինակը , որ բանի  
տեղ չէր դնէր փոխադրական հիւանդու-  
թիւնը , և աչքին չէր երենար իր մխասը ,  
ուրիշներուն համար աշխատելու ատեն , ո-  
րով ամենուն սիրտ և արիութիւն տուառ  
իր օրինակին հետևելու :

Հիւանդութիւնը սկսաւ կամաց կամաց  
նուազիլ բժշկական արհեստին այնչափ  
խնամքով . բայց կերակուրնին պակսեցաւ  
և որոնք որ մահուանէ աղատեր էին , անո-  
թութիւննէ մեռնելու վտանգի մէջ էին , թէ  
որ աս բարի եպիսկոպոսը չոգար ամէն  
բան : Իրեն հրամանաւը ամէն ունեցածը  
ծախուեցան և ան ստակով հոգաց ասոնց  
ուտելիքը . բայց աս ալ բաւական չըլա-  
լով շրջաբերական թուղթ մը հանեց բոլոր  
իր թէմին մէջէն ողորմութիւն ժողվելու :  
Իր գովելի փափաքանացը հասաւ . Գաղ-

դիոյ ամէն քաղաքներէն առատ ողորմու միւն ժողովսիցան ՚ի նախաստ աս դրժ բաղդներուն : Տժագաւորը և իրեն բարե պաշտ ընտանիքը՝ որ ամենեին առիթ մը չէին փախցներ խեղճերուն և կարօտելոց օդնութիւն համնելու, հարուստ պարզեներ խաւրեցին իրեն : Այս ամէն նախաստները խեղճ ժողովրդեան կարօտութիւնը լեցնելու բաւական եղան, որոնք չէին դադրէր զԱստուած օրհնելէն որ ասանկ հրեշտակ մը խրկեց զիրենք ազատելու :

Խրիկուն մը Վէլսչէն այց ելնը էր դաշտին ան կողմերը ուր հիւանդութիւնը աւելի սաստիկ եղած էր, և շատ հիւանդներ գեռ վտանգէն չէին ազատած . երբոր կը դառնար ողորմելի մարդ մը դիմացը եւլու, որ երեսէն կերեցրնէր թէ ծանր և երկար հիւանդութեանց վշտեր քաշած էր . մարմինը վատուժցած, երեսին գոյնը դեղնած ու խեղճ նայուածքը կը ցուցնէին թէ հիւանդութենէ, նոր եղած սիրտի բլար : Աս մարդս մօտեցաւ իրեն, բարձր ձայնով աղաղակեց :

— Հիմա կը մեռնի, ահա կը մեռնի :  
— Ո՞վ է մեռնողը .

— Ազաթան , Ազաթան , ահ , տէր ,  
խալսէ խեղճը :

Աս բաելով ողորմելին վաղեց Նալիսկու-  
սլուսին առջևէն՝ ցուցընելով անոր վրան մը :  
Ֆէլիչէն փութաց մտաւ ներս և տեսաւ  
աղջիկ մը որուն աշքերը գոյուած էին ու  
երակը անշարժ . իր հետը եկող բժիշկները ,  
փութացին օգնութիւն մը ընելու , բայց եր-  
կար ատեն զգայութիւնը վրան չգալով ստի-  
պուեցան եւելի զօրաւոր գեղեր՝ ի գործ  
դնելու որպէս զի խելաբերեն խեղճը : Աս  
ցաւալի գործողութեանց ատեն անկողնոյն  
վարի կողմէն հառաշանաց ձայներ կը  
լսուէր . տեսաւ եպիսկոպոսը որ զինքը հռն-  
բերող մարդին էր , երեսին վրայ գետինը  
փուռած եռանդագին աղօթք կընէր առ  
Աստուած , որպէս զի ասողջութիւն պար-  
գևէ թշուառ կնկանը : Աս սրտաշարժ տե-  
սարանէն գուշակեց Ֆէլիչէն մարդուն սրբ-  
տին աղէկութիւնը , և չեռացաւ ամեննեին  
անոնց քովէն , ինչուան որ խեղճ հիւանդը  
վտանգէն շագատեցաւ . ու մինչև անոր  
կատարեալ առողջութեան ատենը ամէն օր  
կը հանդիպէր տեսնելու թէ արդեօք իր  
կարգաւորութիւնները աղէկ կը կատա-

ըուին . և այսպէս իրեն մեծ խնամքովը քիչ  
ատենուան մէջ բոլորովին առողջացաւ խեղճ  
աղջիկը :

Օր մը այս աղջիկը յայտնեց իր երախ-  
տագիտութիւնը ըսելով : Ծաէ որ գիտնայ-  
իք , սրբազն տէր , որ անսանկ անձ մը  
ազատեցիք որ ամեննեին արժանի չէր ձեր  
երախտեացը , թերեւս կը զղայիք այնշափ  
ըրած բարիքներնուդ վրայ :

— Կստուծոյ բարութիւնը անբաւէ , ինքը  
միայն կրնայ փրկել զձեղ ձեր ամէն մեղքերէն :

— Յիրաւի շատ մեծ է :

— Քաջալերուէ ուրեմն աղջիկս և խըն-  
դրէ Կստուծոյ ողորմութիւնը .

— Քեզմէ ներումն կը խնդրեմ սրբազն  
տէր , որովհետեւ առանց անոր երկինքը ինձի  
թողութիւն չի տար . . .

— Ես չեմ գիտեր թէ դու ինձի մաս  
մը ըրած ըլլաս .

— Ես ալ չեմ գիտեր .

— Ո՞վ է ուրեմն .

— Մ'Էկ դժբաղդ մը , որուն խիղճը  
շատ կը տանջէ զինքը , առջի ըրած գէշու-  
թիւններուն համար , ուստի և ոչ կը հա-  
մարձակի աչքիդ երենալու :

— Աղեկ բան չըներ . ես ոչ երբէք ապաշխարող մը ետ Ճամբեր եմ :

— Ե՞ս , տէր , ինքը խիստ յանցաւորէ , և գուն բարութեամբ արդէն անդամ մը ազատած ես զինքը մահուընէ :

Աս միջոցին վրանին ներսի կողմէն մէկը դուրս ցատկեց , և եկաւ եպիսկոպոսին ոտքը ինկաւ . թէպէտ և հիւանդութենէն շատ փափոխուած էր , բայց յայտնի եղաւ որ Բեռնարդոսն է . . . : Քիչ մը ատեն լութիւն մը տիրելէն վերջը , եպիսկոպոսը զինքը ոտք հանեց ու ըստ , — Թէոր քու զզջումկ անկեղծ է , թէոր բոլորովին ետ կեցեր ես քու չար սկզբունքներէդ որոնք զբեղ աս կորատեան Ճամբան ձգեցին , կըս նաս ան ատեն ապահով ըլլալ իմ ձեռընտութեանս :

— Քու բարութիւնդ , սրբազն տէր , կ'աւելցընել իմ խղճմանքիս խայթը , և ոչ երբէք պիտի մոռնամ իմ՝ ըրած անարժան գործքերս :

— Թառլ մէկդի ատանկ վշտացուցիչ յիշատակները , ու ըսէ ինձի թէ ինչ բանով կընամ օգնել քեզի :

— Չեմ կընար համարձակիլ խոստու

վանելու իմ՝ վերջին յանցանքս . զիտեմ որ  
քու նախանձայուզութիւնդ ոչ երբէք կը  
ներէ ինձի աս աղջկան հետ ապրիլ :

— Կ'նչ , քու ամուսինդ չէ :

— Չէ . բայց երբ կուզէինք սպակուիլ ,  
տարափոխիկ ախտը վրայ գալով խոր-  
հորդնիա արգիլուեցաւ .

Աս բաելով սկսաւ պատմել Շեռնարդոս  
թէ ինքը ինչպէս աս որբ աղջիկը Եգա-  
թան՝ որ Փարիզու մէջ պտղածախ էր ,  
դիսէ հաներ է , և մէկտեղ դարձեր են ա-  
նոր հայրենիքը , հոն հասարակ պանդոկ  
մը բայեր սկսեր են անիրաւ վաստակով  
ապրելու : Եգաթան իր խղճմանքէն տան-  
ջուած անգաղար կըսէ եղեր թէ ան ամէն  
վաստակնին պիտի կորսնցնեն մեծ դժբաղ-  
դութեամբ մը : Եւ ահա փոխադրական  
հիւանդութիւնը վրայ գալով երկուքն ալ  
կը բռնուին ու մահուան դռները կը հաս-  
նին : Ան ատեն Շեռնարդոս զարհուրելով  
Եստուծոյ աս ահաւոր պատիմէն , աշքը  
կը բանայ կը տեսնէ իր մեծամեծ սխալ-  
մունքներն ու զղջումի կուդայ :

Հոս Եգաթային հեծեծանքը ու լայր  
Շեռնարդոսին խօսքը արգիլեցին , ու շար-

ժեցին եպիսկոպոսին սիրտը որ քաղցրութեամբ ըստ իրեն :

— Մեղմէ քու ցաւերդ գուստը իմ, ամէն բանին ձար կ'ըլլայ . դուք գեռ տարիքնիդ չէք առած , կրնաք ասկէց վերջը նորէն լաւ անուն ունենալ ձեր քաղաքացեաց դիմացը . և Աստուծմէ թողութիւն գտնել : Դոք դարձիք առաքինութեան ձամբան , ևս վրաս կառնեմ հոգալու ձեր օժիտը :

Աս խօսքերս ըսելով գնաց Փելիչէն , և թողուց զիրենք մեծ շփոթութեան ու զարմացման մէջ իր անփոփոխ բարերարութեանցը համար , Աստուծոյ կամացը աս արժանաւոր թարգմանը :

Քանի մը օրէն ետքը եպիսկոպոսը օրհնեց Շեռնարդոսի ամուսնութիւնը Ագաթային հետ . և կրօնքին շնորհքը մաքրեց անոնց գայթակղական կենաց հետքերը : Փելիչէ սրտաշարժ յորդորակ մը խօսեցաւ ունեցած սլարտքելնուն վրայ և թէ ի՞նչ խնամք պէտք են ունենալ իրենց որդւոցը վրայ երբոր ունենան : Երկու ամուսինները խոստացան անկէ ետև քրիստոնէավայել և կանոնաւորեալ կեանք մը անյնեղով՝ մուցընել տալու իրենց ըրած գէշութիւնները :

Բեռնարդոսի հին ատելութիւնը որ չեր  
մարած Փէլիչէին ըրած այնչափ աղէկու-  
թիւններովը, ալ չի կրցաւ գէմ դնելա-  
նոր բարութեան աս վերջի ապացուցին .  
որովհեաւ ինքը խալսեց Ծգաթային կեան-  
քը, և ան օժիտն որ իրենց պարգևեց, բա-  
ւական եղաւ իր ունեցած պարտքերն ու  
կորուստները լեցնելու :

Բեռնարդոս իր եռանդնոտ բնաւորու-  
թեամբը առջի գէշ բնաւորութենէն բոլո-  
րովին հակառակը փոխուեցաւ, ու յետին  
աստիճանի յարգութեամբ ու սիրով կա-  
պուեցաւ Փէլիչէին հետ, և իր ազնուական  
պաշտպանին սիրելի ըլլալու փափաքով փո-  
խուեցաւ բոլորովին նոր մարդ մը եղաւ :

Փէլիչէին քովէն չեր բաժնուէր, ու իր  
երախտագիտութիւնը կը ցուցընէր անոր  
ամէն հրամանները յօժարութեամբ և փու-  
թով կատարելով :

Փէլիչէն աս բարեյաջող փոփախութիւնը  
տեսնալով կուրախանար և ամէն բան Ծգ-  
տուծոյ փառայը կը նծայէր :

Յօժիշկները մաքրել տուին քաղաքը և  
ժողովուրդը խուռն բազմութեամբ ներա-  
մուաւ, որոնց ընկերեցաւ Փէլիչէն . հոն

ներկայ գտնուեցաւ իրենց եղած պարզեաւ-  
բաշխութեանը . ետքը իմացուց թէ ալ իրեն  
օգնութեանը կարօտութիւն մը չունին և  
թէ կը թողու զիրենք : Այս խօսքերուն  
բոլոր ժողովաւրդը ոտքը ինկած կը խըն-  
դրէին իր սուրբ օրհնութիւնը , իբրև իր  
վերջին բարերարութիւնը : Ֆէլիչէն մաղ-  
թեց անոնց երկնքի պաշտամանութիւնը , և  
բաժնուեցաւ իրենցմէ , իր հետը տանելով  
անոնց սէրը և օրհնութիւնը :



## ԳԼՈՒԽ Թ.

Երախտագիտութիւն :

(Անակնկալ դարձ) :

ԱԿՍ զիշեր եղեր էք , մէյմ'ալ Բեռնարդոս սպատի կասլոց մը ձեռքը առած մօտեցաւ իբ կնոջը , ու ըստ անոր . Պիտի թողում զքեզ Ագաթա . մնաս բարով :

— Ո՞ւր կ'երթաս :

— Իմ եպիսկոպոսիս Հետ . ես զինքը լաւ կը Ճանչնամ . Ժողովրդեան սիրտը տակն ու վրայ չընելու համար , գուցէ առանց բան մը բսելու քաղաքը թողու երթայ , ուստի կուղեմ իրեն ուղղեցոյց ըլլալ և ծառայել :

— Ի՞նչ միթէ եպիսկոպոսը քեզի կարուտ է . չո՞նի ինքը իբ կառքը ու ծառայները .

— Ատիկ ըրէ Ագաթա, ծածուկ բան  
մը ունիսմըսելու քեզի . դիտեմոր ինքը բո-  
լոր ունեցածը ծախեր է՝ մեզի օգնելու և կե-  
րակուք ճարելու համար . իր կաչ կարասի-  
քը, իր ձիերը, ուսկիէ խաչը, ինչուան նաև  
իր եպիսկոպոսական մատնին այլ :

— Աչ, աս ի՞նչ աղնիք անձն է, ըստ  
Ագաթա, իրաւցընէ կընայ ըսուիլ Աստու-  
ծոյ Ճշմարիտ պաշտօնեան . զնաւ Բեռնար-  
դոս մի թողուք զի՞նքը, և գոչէ քու կեանիքդ-  
անոր կեանկը պաշտպանելու համար թէ որ  
հարկաւոր ըլլայ . ես կը միսիթարուիմ մը-  
տածելով որ գուն ասանկ մէկ սուրբ սրարաք  
մը կը կատարես :

Ագաթան վազեց երկանը Ճիտը սկը-  
լուեցաւ, ետքը գնաց խանութին դուռը  
բացաւ Ճամբան ցուցընելու համար ուսկից  
որ այիտի երթար : — Ա աղէ շուտով,  
զնաւ, ըստաւ, թէ որ իրեն Հանիս մեծա-  
պէս կը տրտովիմ :

Բեռնարդոս չի խարուեցաւ՝ գնաց գտաւ  
Փէլիչէն որ նոր Ճամբայ ելելու վրայ էր .  
անանկ մեծ վերարկույնի մը ծածկուած էր  
որ բնաւ չէր երենար թէ իր աստիճանին  
դարդերէն ու զգեստներէն մերկացած էր .

Բնեոնարդոս մօտենալով հրաման խնդրեց  
ընկերելու իրեն :

Փելիչէն կաշխատէր համեզելու վիճակը որ  
ետ կենայ ատ ծառայութենէն , բայց ան  
այնչափ ետևէ ինկաւ որ բարի եպիսկոպո-  
սը , ստիապուեցաւ զիջանելու անոր աղաջա-  
նացը . և երկուքը մէկտեղ ձամբայ ելան :  
Եւա աս կերպով Փելիչէն թողոց լոիկ  
մնջիկ ան քաղաքը ուր այնչափ գեղեցիկ օ-  
րինակներ տուած էր իր մարդասէր խնա-  
մոցը . ձամբորդութեան մէջ Բնեոնարդոս  
սկսաւ ցաւիլ Փելիչէն վրայ թէ բնչպէս  
ասանկ ոտքով կը քալէր : Եպիսկոպոսը  
ժամտելով պատասխան տուաւ :

Կը յիշես արդեօք Բնեոնարդոս , ան  
առաջին ձամբորդութիւնը որ մէկտեղ ը-  
րինք :

— Ա՛Յ , սրբազն տէր , որչափ տար-  
բեր է աս անկէ . Հրամաննքդ ան ատենը  
գեռ չէիր ընդունած ան մեծամեծ սպա-  
տիւները , որոնց քու առաքինութեամբդ  
արժանի եղար հիմայ :

— Ա՛Յ , բայց սն սպատիւները ինձի  
մոռցնել շտուին ոտքով քալելու սովորու-  
թիւնս :

— Ասկայն ի՞նչպէս կը լսայ որ եպիսկոպոս մը այսպէս ոտքով քաղէ իբրև հասարակ մարդ մը :

— Ես իսկոպոս մը՝ իր ըրած աղեկութիւնովը միայն պէտք է որոշուի ուրիշ մարդի իներէն :

— Ա՛յ տէր, դուն կրնաս սպարծիլ քու սպարտքերդ աղեկ կատարելուդ համար . թէ որ բոլոր աշխարհք այսպէս իր սպարտքը աղեկ կատարէր, աշխարհքիս գործողութիւնը՝ հիմակուանէն շատ աւելի աղեկ առաջ կերթար :

— Իմ տեղս ով որ ըլլար, հարկաւ իմ ըրածիս պէս սիխի ըներ :

— Պատասխանեց Բեռնարդոս ինչ որ կ'ուզես ըսէ, ես կը պնդեմ, որ տասը հազար հոգիէն և ոչ մէկը կրնայ գտնուել որ ծախած ըլլայ իր կահկարասիքը ու իր սրբազան զարդերը :

— Ի՞նչ կ'ըսես Բեռնարդոս :

— Ո՞ի բարկանաք սրբազան տէր, որ հրամանքներնուդ գաղտնիքը իմացուեր է . բայց ստոյգ գիտեմ որ գուք ամէն բան զոհեցիք մեղի օգնելու համար :

— Կը զարմանամ թէ ինչպէս ասանել

մարդուս բնական իր մէկ պարտքը՝ իրեւ  
մեծ բան մը ամէն տեղ հռչակուեր է։ Կա  
պըսալրեմ քեզի բնաւ շխօսիլ աս բանիս վրայ։

— Ա՛չ, սրբազն տէր, շատ գժուար  
կուգայ ինձի աս բանիս մէջ ձեզի հնա-  
զանդիլը . Բնչպէս կրնամ զսպել իմ սիրտս  
և լոկ երախտադիտութիւնս ու մեծ զար-  
մանքս, որ ձեր բարութեամբը ինձի պէս  
ողօրմելի մարդուն սիրտը գրաւեցիք : Ես  
ամէն բանի մէջ պարտըկան եմ հրամա-  
նոցդ . առանց քեզի դեռ ինչուան հիմայ ես  
մէկ դատարկաշրջիկ մարդ մը պիտի ըլլայի  
տեսակ տեսակ ամօնալի ախտերու գերի,  
դու զիս լուսաւորեցիր ճանչնալու իմ  
պարտքերս . քեզմով ծագեց իմ սիրտս նո-  
րէն դառնալուան իմաստուն սկզբանցը,  
որոնցմով միայն կրնայ մարդս երջանիկ  
ըլլալ : Եւ հիմա հրամանքնիւլ Բնչպէս  
կուզէք որ ես ծածկեմ աս ամէն զիտ-  
ցած բաներա . . . Ուշ, աս հրամանը ինձի  
շատ ծանր է :

— Ա՛նկ դի թող Շնոնարդոս աս տխուր  
մտածութիւնները . և մի մնանար բնաւ, թէ  
ան առաքինութիւնն է միայն անսխալ ու ա-  
պահով որ շատ փորձերով հաստատուած է:

— Քուկդ փորձի կարստութիւն չունի :  
— Բայց ով կընայ ապագային վրայ  
վստահ ըլլու :

— Հրամանիքդ , սրբազան Տէր .

Եյսալիսի խօսքերով Բեռնարդոս կը  
ջանար զբաղեցնել Եպիսկոպոսը ճամբուն  
երկայնութիւնը շիմանալու համար : Վեր-  
շապէս երկու երեք օր ճամբայ ընելէն ետքը  
հասան եպիսկոպոսանիստ քաղքին դրանիք  
քով՝ փոշի ու քրտինքի մէջ թաթխած :  
Ֆէլիչէն գիշերուան մութուն սպասեց որ  
իր պալատը մտնայ . բայց իր մարդիկը տես-  
նելով զինքը անանկ փոշոտած կերպարան-  
քով ու լաթերով ջանչցան ու չէին թո-  
ղուր որ ներս մտնայ , և գոները կը գոցէ-  
ին անոր երեսին : Են ատեն պուտով  
մը ըստ Բեռնարդոս , — Ինչու չէք թո-  
ղուր որ իր պալատը մտնայ աս գթութեան  
հրեշտակը որ ամեն բան զոհեց ամբողջ ժո-  
ղովուրդ մը փրկնելու համար : Ի՞նչպէս չէք  
ճանչնար տերանց մէջ ամենէն առաքինին ,  
գուցէ այս մի միայն մնացած զգեստովը  
ծածկուած ըլլալուն համար . Ես ըսելավ  
մէկդի առաւ Բեռնարդոս անոր վրայի վե-  
րարկուն և յայտնուեցաւ ան ազնիւ անձը :

Իր հաւատարիմ ծառայները մէկէն ոտքը  
ընկան թողութիւն խնզրելով . քաղցրու-  
թեամբ մը զերենք ոտք հանեց Փէլիչէն . և  
ինքը փութաց գլուխը բարձին դնելով քիչ  
մը զօրանալու : Քանի մը օր հանգչելէն  
ետքը , Փէլիչէն նորէն ձեռք զարկաւ իր  
առաքելական սպաշտօնին , և ընդունեցաւ  
քաղքին ամէն սպաշտօնակալաց խնդական-  
թիմուր , որոնք կը փութային երախտագի-  
տութիւննին յայտնելու որ բոլոր բնակչաց  
սիրտը յափշտակեր էր այնչափ վսեմ՝ առա-  
քինութիւններով : Փէլիչէն անանկ սըր-  
տաշարժ և պարզ կերպով մը սպատասխա-  
նեց , որով եւելի արդիւնաւոր եղան իրեն բա-  
րեզ ործով թիւնները և կը զարմացնէր զա-  
մինքն ալ իր անփրուվ հաստատութեանը  
վրայ առաքինութեան ձամբուն մէջ :

Իրիկուն մը երբոր աս բարի եպիսկոպո-  
սը ծածուկ ողորմութիւն բաժնելէն կը  
դառնար , դիմացը ելաւ իրեն եկեղեցւոյ  
քահանայներէն մէկը . որ հրաման խնդրեց  
մէկ տեղ երթարու ինչուան իր պալատը .  
ընդունեցաւ Փէլիչէն անոր խնդիրքը , և  
երկուքը մէկտեղ խօսակցելով տուն կը դառ-  
նային . ան միջոցին մուրացկան մը մօտեցաւ

ողորմութիւն խնդրեց , Փելիչէն կեցաւ որ  
ստակ տայ անոր . բայց իր ընկերը թևէն  
բռնելով արդելոց ըսելով :

— Գիտէք հայր սուրբ որու ողորմու-  
թիւն կուտաք . պատասխան տուաւ եպիս-  
կոպոսը , — Աղքատի մը :

— Եյո , բայց չըեայ աղքատի մը :

— Իրաւ՝ չըեայ է . աս ըսելով կրկնա-  
պատիկ ողորմութիւն տուաւ , ու ըսաւ ,  
— Առ բարեկամ . ասով պիտի ստիպուիս  
աղօթելու քրիստոնէից համար :

— Զէք կասկածիր սրբազն Տէր որ  
ձեր այս անտարբերութիւնը ուշացնէ խել-  
մը մարդկանց դարձը . կրնար ըլլալ որ  
ասոնցմէ մէկը խեղճութենէ ստիպուած  
գար ու մեր սուրբ եկեղեցնայ դիրկը իյ-  
նար :

— Թէ որ Աստուած ուզէ , անիկայ  
դարձեալ կուգայ . բայց համոզուելով պէտք  
է որ գայ չէ թէ սովէ ստիպուելով . կուզէ  
մեր երկնային վարդապետը որ զմեղ նուի-  
րենք իրեն :

Կո խօսակցութենէս ետքը Փելիչէն մնաս  
բարով ըսաւ այս մեծամեծ երևակայու-  
թիւններով բռնկած պատանւոյն , մոտաւ իր

պալատը,ու տեսաւ որ Ազաթան վազելով  
դիմայը ելաւ ու կըսէր :

— ԱՇ, սրբազն տէր, ինչ երջանկու-  
թիւն է մեզի որ այնչափ աշխատանքէդ ե-  
տև նորէն զքեղ ողջ ու առողջ կը տեսնանք:

— Ծնորհակալ եմ դուստր իմ. բայց  
աս ինչ նոր բան է որ զքեղ առ քաղաքս կը  
տեսնամ: Միթէ նորէն տարափոխիկ հի-  
ւանդութիւնը սկսաւ :

— Ե սրբազն Տէր, փառք Աստուծոյ  
ամէն բան աղէկ է. բայց Բեռնարդոս  
գրեց ինձի որ ծախսեմ շուտով մեր վաճա-  
ռատունը, որալէս զի կարենանք գալ ու  
բնակիլ ան քաղաքը ուր կը բնակի մեր  
ոլաշտականը. վասն զի ինչպէս յայտնի է  
երկաթէ շինած չէ մարմննիս. մերջապէս  
թէ որ հրամանքնիդ ալ հիւանդանալու ըլ-  
լաք, մենք երկուքնիս պատրաստ ենք ա-  
մենայն ծառայութիւն ընելու ձեզի :

— Բարեպաշտօն տիկին, իմ առողջու-  
թիւնս անանկ կատարեալ է, որ կը յու-  
սամ երկար ատեն ձեր ինամոցը կարօտու-  
թիւն շունենալ, բայց ես կը ճանչնամ ձեր  
ինձի համար ըրած զոհը, որուն երախտա-  
դէտ պէտք է ըլլամմիշտ :

— Այի ըսեր ատ խօսքը հայր սուրբ .  
Ալթէ մենք շահու համար եկած ենք  
Հռու :

— Չէ Վգաթա , ինծմէ շատ հեռու է  
ատամնկ բան մտածելը ձեր ազնիւ սրտին  
վրայ . բայց սկզբ է որ դուք մնաս մը չի  
քաշէք աս փոխադրութեան պատճառաւ :

Երկրորդ օրը Փելիչէն կանչել տուաւ  
Բեռնադրդոսը և ըստաւ .

— Չեր իմ՝ վրաս ցրցուցած սէրը վար-  
ձատրութեան արժանի է . ես կը փափա-  
քիմ որ ազատ ու եղջանիկ կեանք մը ան-  
ցընէք : Փնտուէ հոս մօտիկները , տես ծա-  
խու կալուածք մը կայ , աս խանութէն  
շատ աւելի աղէկ է ձեզի համար :

— Վրդէն մտածեր էի ես ալ ասոր  
վրայ . սակայն հարկաւոր եղած ստակը  
չոնիմ :

— Ետեւէ եղիր տեղեկանալու :

— Եհաւասիկ ծախու է՝ ճերմակ կա-  
շուած ըսուածք . բայց շատ սուղ է :

— Ո՞րչափ ստակ կը պակսի :

— Վեց հազար ֆրանք :

— Ես կու տամ ձեզի , և թէ որ ասկէ-  
միրջն ալ զոհ ըլլամ ձեզմէ ինչպէս որ եմ

Հիմայ , ուրիշ նոր բարիքներ ալ աւելցնելու  
անհոգ չեմ ըլլար :

— ԱՇ սրբազն տէր , ի՞նչպէս սկսի  
կարենամ վոխարինել ձեզի :

— Գնա Բնեռնարդոս , և մի մօռնար  
բնաւ որ աշխարհիս վրայ ամէն բարիք պար-  
գետը Աստուած է , ուստի անոր միայն  
պարտական ես երախտագետ ըլլալ :

Բնեռնարդոս վազեց աւետելու իր կնոջը  
աս բարեբաղդութիւնը . որով ան ալ Բնեռ-  
նարդոսին ուրախութեանն և երախտագի-  
տութեանը մասնակից եղաւ : Ըստ մը ծա-  
խու առին կալուածքը , և այս երկու ամու-  
սինները գնացին շնորհակալ ըլլալու իրենց  
վեհանձն պաշտպանին , որ քաջալիքեց զի-  
րենք միշտ արժանաւոր ըլլալու իրեն խնա-  
մոց ալ , և հրաժարեցաւ աս խօսքերս ըսե-  
լով . Ատքերնէդ մի հանեք ամեննեին թէ  
կայ Աստուած մը , և բնաւ մի տարակու-  
սիք :

Տարի մը անցաւ և կարդէ դուրս յաջո-  
ղութեամք առաջ կ'երթար աս երկու ամու-  
սիններուն գործողութիւնը : Ազաթան սի-  
րուն որդի մը ունեցաւ որով երջանկու-  
թիւննին աւելցաւ և ամէն կողմանէ բաներ-

նին կը յաջողէք : Բեռնարդոս միշտ շնորհակալ կ'ըլլար Աստուծոյ պարզեած առատ բարիքներուն համար , և ստէալ կ'ըսէք թէ բնաւ այնպէս երջանիկ չէք եղած , ինչպէս դարձի գալէն ետքը :



## ԳԼՈՒԽ Ժ .

Իր կեանքը ուրիշներուն համար  
զոհել :

ՎՃԽԱԲՀՔԻՍ յաջողութիւնները ինչ-  
պէս յայտնի է խախուտ և անհաստատ բա-  
ներ են և շատ անդամ Ըստուած ալ կը  
թողու որ առաքինութիւնը ծանր փորձերու  
տակ դրուի : Իրիկուն մը երբոր խաղաղու-  
թեամբ կը հանգչէր Փելիչէն , մէյմ' ալ  
յանկարծ արթնցաւ զարհութելի մըրիկով  
մը . որոտման շառաջմունքը կը միանար ան  
սարսափած ժողովրդեան աղաղակին հետ ,  
որոնք բազմութեամբ այն գեղը կը վա-  
զէին , ուր էր Շեռնարդոսին տունը ու  
կալուածը և կ'այրէր երկնքէն ինջած կը ա-  
կով : Խել մը բնակարաններու վրայ կայ-  
ծակ զարկած էր , և կրակին բոցերը սաս-  
տիկ քամիէ մղուելով կը սպառնային ամէն  
բան մօխիր դարձնելու : Փելիչէն իր գղե-

թին դլուխ կեցած զնաց կրակին տեղը և  
հմն կրակը մարելու հրամաններ կուտար իր  
սովորական եռանդուն ոգւովը . բայց չկըք  
նալով դէմը առնել , քիչ վայրկենի մէջ ամ  
բողջ գեղը կրակի մատնուեցաւ և բան մը  
չի կրցաւ դէմ՝ դնել կրակին ուժգնութեա  
նը . տուները փլան , նախիմները դաշտերու  
մէջ մոլորած ասդին անդին կը պըտըտէին ,  
և իրենց ողորմագին բառաշը խեղճ գեղա  
ցոց յուսահատութիւնը կ'աւելցնէր : Բոլոր  
գեղը ոշընչացաւ մոխիր և աւերակ դառ  
նալով . աս աւերակիներուս մէջէն ուրիշ բան  
չէր լսուեր բայց եթէ յուսահատելոց , վի  
րաւորելոց , և հոգևարքներու ձայներ : Փէ  
լիչէն ինքը զինքը ամենածանր վտանգի մէջ  
դնելով , առանց մոտածելու իր անձը՝ բնա  
կիչներէն խել մը մարդիկ աղատեց . մեծ  
վտանգ ու վախ կար , որ կրակը մերձակայ  
կալուածքներն ալ այրէ՝ մօրկիէ . Բեռնար  
դոսին երկիրներն ամենէն աւելի վտանգի  
մէջ էին . կրակը անսանկ շուտով առաջ  
գնաց , որ Բեռնարդոսին ընտանեացը օգ  
նելու համար , հարկ էր կիսայրեաց աւե  
րակիներէն անցնիլ երթալ :

Փէշիչէն շատ ստակ խորսացաւ ա-

նոնց որոնք որ յանձն առնեն փրկելու այն դժբաղդ ընտանիքը . բայց ընաւ մէկը չուզեց իր կեանիքը վտանգի մէջ դնել :

Աս բանս տհամալով եսլիսկոպոսը՝ մխացող աւերակներուն մէջ նետուեցաւ , և իր այս վեհանձն օրինակին հետևեցան ուրիշ երկու եկեղեցականներ ալ . հազարումէկ վտանգներէ ետքը վերջապէս հասաւ Բեռնարդոսին կալուածը . ուր գտաւ Բեռնարդոսը կրակէ սկաշարուած , ու խցի մը մէջ փակուած . կրակը արդէն սկըսեր էր ներս մտնել , և 'ի զուր կը ջանար Բեռնարդոս կնոջը օգնելու : Փէլիչէն իր ընկերներուն օգնութեամբը բոլոր ընտանիքը կրակէն ազատեց . ու երբոր Վգաթային զգայութիւնը վրան եկաւ սկսաւ յուսահատաբար իր որդին խնդրել : Կրակին բոյը տանը պատուհաններէն ելալով յայտնի կ'իմացնէր որ տանը կործանումը մօտ է : Բարի եսլիսկոպոսը ցաւելով աս վշտացեալ մօրը խանդաղատանաց վրայ , շուտ մը նորէն կրակին մէջէն անցնելով Բեռնարդոսին տունը դարձաւ ու վնասուելով գտաւ տղան որ օրորոցի մէջ քոմն կ'ըլլար . առաւ իր զիթիը և զգեստին մէկ ծայրով ծածկեց ,

ու Ճամբայ կը փնտուէր դուրս ելելու . բայց  
ժամանակը անցեր էր , կրակը շօրս կողմը  
պատեց : Առ ատեն ցաթկեց կիսայրեաց  
գերանի մը վրայ . ու անշարժ կեցած աս  
խախուտ յենարանին վրայ , դէպ 'ի երկինք  
վերցուց տղան , կ'աղաչէր Աստուծոյ որ ա-  
զատէ խեղճը , ինչպէս փրկեր էր զինքը իր  
տղայութեան ատեն նմանօրինակ վըտան-  
գէ մը :

Չուաններ նետեցին իրեն , բայց չի հա-  
սան : Աանդուխ մը կոթընցուցին տանը ,  
որուն վրայ հազիւ թէ ոտքը դրաւ և ահա  
տունը կործանեցաւ սաստիկ ձայնով մը .  
գերանիը շենքէն բաժնուեցաւ և վար իյնալու  
ատեն Փելիչէին գլուխը վիրաւորեց . բայց  
ինքը վերջի Ճիգը թափելով տղան գրկէն չի  
ձգեց . և զգայութիւնը կորուսած գլորե-  
ցաւ սանդուխին ոտքին քով : Ա'կէն հանե-  
ցին զինքը այն սոսկալի տեղէն և դրին կա-  
նաչաղարդ բըի մը վրայ . ժողովուրդը չօրս  
դին առած կ'աղաչէր Աստուծոյ որ խեղճին  
օգնութեան համնի : Տղան աղատելու հա-  
մար ըրած ջանքը վախճանին հասաւ . բայց  
ինքը բոլորովին ուժէ ինկաւ : Ա'ահացու  
հարուածով վիրաւորեցաւ այս ազնիւ երկ-

նային զոհը և ամենուն աչքէն արցունքը  
դետի պէս կը վաղէր :

Ֆէլիչէն շարժմանք մը ցրցուց և ահա  
խորին լոռւթիւնը տիրեց, յուսահատու-  
թեան աղաղակին տեղ. և ամէնքը կ'ուղէին  
անոր վերջի խօսքերը լսել. ցած ձայնով մը  
խնդրեց որ իր մարմինը փոխադրուի այն  
գեղը ուր որ տարեր էր զինքը Աստուծոյ  
ձեռքը տղայութեան ատենը. աս խօսքերէն  
ետքը եղաւ՝ նստաւ, և զրուցեց .

— Քաղցր է ինծի աս մահս. որովհե-  
տե աղատեցի ատ զաւակը. ահա կը մեռ-  
նիմ՝ ձեղի համար սիրելի որդեակը իմ։ Ու  
տեսնելով որ Բեռնարդոսը իր ոտքը ին-  
կած կուլար, ըստ . Այսիմարէ զքեղ սի-  
րելի, և թող որ աս յուսով մեռնիմ, թէ՝  
իմ յիշատակս պիտի քաջալիրէ զքեղ մինչեւ  
ետքը աղէկութեանոդ մէջ մնալու :

Այն վայրկենին արեւոն ճառագայթնե-  
րէն ձեւացած փառաւոր թագ մը պըսակեց  
անոր զլուխը, 'ի նշանակ իրեն պատրաս-  
տուած անմահութեանը. և հոգին երկրա-  
ւոր ծանրութենին աղատելով, թուաւ իր  
արարջին ծոցը :

Ֆէլիչէին մահը բոլոր իր ժողովութեան

մեծ տրտմութիւն պատճառեց + ամէնուն  
աչքը սլատկառանքով մը այս բարերարու  
թեան զոհին վրայ դարձած էր . իրեն սրբ  
բազան զգեստը , պաշտօնին վերաբերեալ  
նշանները , կուրծքին վրայի ուսկեայ խաչը  
և իրեն դիմաց պարզութիւնը այնպէս կ'եւ  
րեցնէր որ կարծես թէ անուշ քունով յա-  
փրշտակուած ըլլար : Խել մը ատեն այն  
չափ սաստիկ էր ժողովրդեան ցաւը որ եւ  
կեղեցին կը հնչէր յուսահատած ժողովը  
դեան աղաղակէն . կրակը մարելու համար  
հարկաւոր աշխատութիւնները դադրեցան ,  
բարի եպիսկոպոսին վերջի ծառայութեանը  
համար : Մարմինը զմռաեցին ու  
շքեղազարդ անկողնոյ վրայ դրին 'ի յար-  
գութիւն ժողովրդեան , և կը սպասէին թա-  
գաւորական հրամանին՝ որոն ողորմնա-  
բաշխն էր : Այս ազնիւ ինքնակալը չի կը-  
ցաւ արցունքը բոնել անանկ մարդու մը վրայ  
որ իր փառաւոր ընթացքը կատարեր էր 'նե-  
րողակիւթ և անխօնջ բարեգործութեամբ :  
Հրամայեց որ կատարուի անոր վերջի խըն-  
դիրքը ու փոխադրուի մարմինը իր մննդեան  
դեղը . ու արքունի ծախփով մեծակառոյց  
մահարձան մը շինուեցաւ մարմարիոնէ .

վիան փորուեցաւ իր առաքինական բարե-  
գործութիւնը, եկեղեցական զգեստները հա-  
գած ու ձեռքը տղան երկինք բարձրացու-  
ցած, ու կրակին մէջ կը նետուի :

Փարիպու գղիրէն քահանայից բազմու-  
թիւն եկաւ Ֆէլիչէին մարմնոյն յուղարկա-  
ւորութեանը համար . Հոյակապ կառքի մը  
վրայ դրին տապանը որ սգոյ գորգերով  
ծածկուած էր . սևով ծածկուած շորս նը-  
ժոյդ ու ցցունքներ զլուխնին խոթած կառ-  
քը կը քաշէին, բայց անանկ վեհ քալուած-  
քով մը որ կարծես թէ կը հպարտանային  
ասանկ սրտաշարժ անսարանին հանդէսը  
և եղնելու համար ընտրուած ըլլանուն  
վրայ : Իր եկեղեցական պաշտօնին նշան-  
ները շիրմին վրայ դրուած էին : Հասան  
յուղարկաւորները եկեղեցին և լմնցաւ աս-  
տուածային սղաշտօնը . խակ բնակիչները  
լալով ետևէն գացին ինչուան քաղաքին  
դուռը . հոն զետինը ինկած աս մարդասէր  
հավուին մարմնոյն առջեը, կ'աղաչէին որ  
իրենց համար բարեխօս ըլլայ առ Աստու-  
ծոյ . և ամենելին տեղերնէն շարժեցան, ին-  
չուան որ աչքերնէն աներևոյթ չեղաւ :

Գեղին բնակիչները, ուր Ֆէլիչէն ըն-

դուներ էր իր մանկութեան ատենը այն  
հիւրընկալութիւնը, ամէն օր կ' երթայինքաղ-  
մութեամբ եկեղեցին և գերեզմանին առջեր  
ինկած արտասուօք կ' աղաչէին զԱստուած  
անոր Հոգւոյն Հանգստեանը Համար, որ իր  
սակաւորեայ կենաց ընթացքին մէջ այնչափ  
սէր ցըցուցեր էր իրենց : **Պէլիշէին բարե-**  
**րարութիւններովը իրենց գեղը մեծցաւ ու**  
**եկեղեցին զարդարուեցաւ գեղեցիկ նկար-**  
**ներով ու սրբապան Հարուստ անօթներով :**  
Իր ցաւալի մահուան լուրը ամէն բարեպաշտ  
ու կրօնասէր անձինքը տրտմեցուց, և ա-  
մէնքն ալ իրենց ցաւը կը յայտնէին այս  
անդարմաննելի կորուստին վրայ :

**Չ**անգակիններուն ձայնը յուղարկաւորաց  
Համնիլը իմացուցին և գեղին բնակիչները  
ընդ առաջ ելան սգոյ զգեստներ հագած և  
ձեռքերնին ջահեր բռնած . կառքին ետևէն  
կ' երթային սեւազգեստ էրիկ մարդ մը ու  
կնիկ մը՝ զիրկը տղայ մը բռնած : **Վմէ-**  
**նուն աչքը կարեկցութեամբ ասոնց վրայ**  
**գարձաւ և մէկէն չորս կողմերնին առին,**  
**և կ' ուղէին իմաննալ և մասնակից ըլլալ ի-**  
**րենց տրտմութեանը :** **Եւ ահա սկսաւ ը-**  
**սել էրիկ մարդը .**

— Արձանինաք ձեր թշուառ հայրենաւ կիցը , որուն յանձնեցիք այս երկնային տըղան , ան հայրենակիցը որ խօսք տուաւ ծառայելու և սիրելու զննքը ամենայն կերպով : Ահաւասիկ ես եմ այն մարդը որ յանդզնեցայ և ուզեցի զինքը սպաննելու . և այս իմ յանցանացս փոխարէն ուրիշ հատուցումն չընդունեցայ իրմէ , բայց եթէ մեծանձն ներուղամտութիւն , ու անանկ բարիք որ իմ ընտանեացս ապրուստը ապահովուցին : Ես պէտք է որ երախտագէտ ըլլամ՝ իրեն՝ թէ առաքինութեան ճամբան դառնալու և աս զաւկիս կենացը ազատութեանը համար , զոր պարզեց ինձի իր անգին կեանքը զոհելով : Ահա առաքինի հայր մը որ արժանի է բոլոր աշխարհէս սկաշտուելու . և ես պիտի ողբամ զինքը քանի որ կենդանի մնամ . ու աս պիտի ըլլայ յաւիտենական առարկայ մը արտասուաց և երախտագիտութեան Ռեռնարդոսի :

Յուղարկաւորները գեղին չորս կողմը պտրացնելով տարին Վելիչէն մարմինը այն եկեղեցին ուր տղայութեան ատենը սրբազան երգեր կը նուազէր և դրին այն խորանին առջեր ուսկից որ իր հոգեբուխ բե-

ըանը կը ճառէր աստուածային պատգամները : Իսկ ժողովրդեան լացը ամէնէն աւելի ճարտար և ազգու դամբանական ճառը եղաւ . ի պատիւ աս առաքինի անձին :

Այս միջոցին որ այս անշնչացեալ մարմնը աներևոյթ ըլլալով կ'ընկղմէր յաւիտենական գիշերուան մէջ , սաստիկ ցաւոց աղաղակները կը խօսեցնէին բոլոր եկեղեցին , առաջ անցաւ պատուական քահանայ մը և յիշեցուց ժողովրդեան անոր ազնիւ ու առաքինական գործքերը որոնցմով նշանաւոր եղաւ , և երկրիս վրայ իր առաքինութեան ցը մշտնջենաւոր յիշատակը թողուց : Ա երջը խօսքը ժողովրդեան ուղղելով , որ չորս դին պատեր էին , ըսաւ . “ Արտասուեցէք աս հրաշալի առաջնորդը . ողսացէք աս աւետարանական եղայրափրութեան նահատակը , որ եպիսկոպոսութեան ցանկացողներուն նախանձելի օրինակ մը թողուց : Ե ացէք զսա , որ արհամարհելով աշխարհքիս մեծութիւնները , զոհեց իր կեանքը իր քաղաքացւոցը համար , և հիմա երկնային գտառէն պաշտպան կը կենայ անոնց : Իր կեանքը թէպէտ կարծատե եղաւ , բայց միանգամյն փառաւոր , :

Գեղասցիք սրտերնին ելած հեռացան ան-  
կեց , կը ինելով օտէպ աս խօսք . թէ պէտ և  
կեանքը կարձատե եղաւ , բայց միանգա-  
մայն փառաւոր :



## ՑԱՆԿ ԳԼԽՈՑ

---

ԳԼ.		5	
ԳԼ.	Բ.	Ցաւալի բաժանումն	11
ԳԼ.	Գ.	Չար ընկերներ	27
ԳԼ.	Դ.	Քահանայութիւն. (Արժանաւոր պատիւ)	39
ԳԼ.	Ե.	Երկու զինուորներ. (Անսահնձ կիրք)	46
ԳԼ.	Զ.	Կորաղանդ ընտանիք մը . (Գործք ողորմութեան)	61
ԳԼ.	Է.	Առաքինութեան արդարացի հասուցումն	60
ԳԼ.	Ը.	Անլուր Բարեգործութիւն	77
ԳԼ.	Թ.	Երախտագիտութիւն. (Անակնկալ գարձ)	88
ԳԼ.	Ժ.	Իր կեանքը ուրիշներուն համար զոհել	100





ՀՀ Ազգային գրադարան



NL0685884

331

ՀՀ Ազգային գրադարան



NL0685883

330

ՀՀ Ազգային գրադարան



NL0685882

329

ՀՀ Ազգային գրադարան



NL0685881

ՀՀ Ազգային գրադարան



NL0685880

ՀՀ Ազգային գրադարան



NL0685879

ՀՀ Ազգային գրադարան



NL0685878

328

327

326

325

